



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» *Տեպրեմբեր* 2026թ.

ՈՍՈ/269-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՅԻՍԻ 23-Ի N 346 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N1550-Լ որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N3 հավելվածի 20-րդ կետով, հաշվի առնելով արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտում նոր պահանջների և գործառույթների անհրաժեշտությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի 2026 թվականի մարտի 20-ի N95/11-31 գրությունը.

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն N1 հավելվածի:

2) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն N2 հավելվածի:

3) Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գործողությունների պլանը՝ համաձայն N3 հավելվածի:

4) Խոշոր հրդեհապայթյունավտանգ օբյեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գործելու պլանը՝ համաձայն N4 հավելվածի:

5) Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավների դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի գործելու պլանը՝ համաձայն N5 հավելվածի:


6) Կոմունալ-էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գործելու պլանը՝ համաձայն N6 հավելվածի:

7) Համաճարակների դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գործելու պլանը՝ համաձայն N7 հավելվածի:

8) Զրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի եվ փլուզման դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն N8 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի մայիսի 23-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության պլանը և պլանի հավելվածները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի նոյեմբերի 21-ի N218 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N346 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

 Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ



## Պ Լ Ա Ն

### Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պլանով կանոնակարգվում է՝ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Արմավիրի մարզում (այսուհետ՝ Մարզ) արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի դեպքում Մարզի բնակչության և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման գործընթացում ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի, Մարզում գտնվող պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների (անկախ կազմակերպչական իրավական ձևից) խնդիրները, գործառույթները ու դրանց իրականացման կարգը:

#### 2. Պլանի նպատակը.

Պլանը հստակ սահմանում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության արդյունավետ կառավարմանն ուղղված բոլոր միջոցառումները, որոշում է բոլոր մասնակից կողմերի դերերը և պարտականությունները, նկարագրում է իրականացվելիք գործողությունները: Պլանում նշված են կողմերի միջև փոխհամագործակցության, հրահանգների փոխանակման և իրավիճակներին արձագանքման շղթան, ինչպես նաև հաղորդակցման ուղիները և անհրաժեշտ տեղեկատվության ու աջակցության ստացման ուղիները:

#### 3. Պլանի իրավական հիմքերն են՝

- 1) «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը.
- 2) «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը.
- 3) «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքը.
- 4) «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 2328-Ն որոշում
- 5) ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N 919-Ն որոշումը.
- 6) ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության և նյութական արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշումը.
- 7) ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշումը.
- 8) ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի «ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 346 Ն որոշումը.
- 9) ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 270-Լ որոշումը.

10) ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի «Որոշողափրկարարական աշխատանքների կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 855-Ն որոշումը:

## II. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՐԶՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ

### 4. Մարզի համառոտ բնութագիրը

#### 1) Մարզի ռելիեֆի, կլիմայի, քուսածածկույթի հիդրոգրաֆիկ բնութագիրը

Մարզը գտնվում է ՀՀ արևմտյան հատվածում, այն իրենից ներակայացնում է միջլեռնային իջվածք: Մարզում է գտնվում Արաքս գետի միջին հոսանքում կառուցված, առայժմ միակ ավտոճանապարհային կամուրջը (Մարգարա գյուղի մոտ), որը ՀՀ-ը միացնում է Թուրքիայի Հանրապետությանը:

Մարզն առանձնապես հարուստ է ջրային ռեսուրսներով: Մարզում է գտնվում ՀՀ ամենացածրադիր լիճը՝ Այղր (Ակնա) լիճը, որը զբաղեցնում է 50 հեկտար մակերես, ունի 2 մետր խորություն, ձագարածև ուրվագիծ և ստորերկրյա սնում: Միակ գետը, որը սկսվում է Մարզի սահմաններում և սկիզբ է առնում Այղր լճից՝ Մեծամոր գետն է (Սևջուրը): Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է: Թուրքիայի հետ սահմանն անցնում է Արաքս գետով: Ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորգետնյա ջրային ռեսուրսներով:

Մարզի տարածքում են գտնվում «Սելավ Մաստարա» հեղեղատարի և Թալիշի ձորակի սելավային հոսքերի արտաբերման կոները:

Արարատյան դաշտում սկիզբ առնող միակ գետը «Սև Ջուր» գետն է՝ Քասախ վտակով: Գետի երկարությունը կազմում է 30 կմ, ջրահավաք ավազանի մակերեսը 0,36 կմ<sup>2</sup>, սնուցումը կատարվում է ստորգետնյա ջրերի հաշվին:

Հակառակ «Սև Ջուր» գետի կայուն հոսքի, Մարզի հարավ-արևմտյան մասով հոսող Արաքս գետը աչքի է ընկնում տարեկան հոսքի մեծ տատանումներով և 3-5 տարին մեկ հորդացումների ժամանակ ջրածածկում է առափնյա բնակավայրերը և ցանքատարածքները:

Մարզի ռելիեֆը տափարակ, գետալճային, չոր նստվածքներից կազմված, տեղ-տեղ ալիքավոր մակերևույթով տարածք է: Ծովի մակարդակից բարձրությունը՝ 800-1000մ: Կլիման խիստ ցամաքային է: Մթնոլորտային տեղումների քանակը չի գերազանցում 300մմ: Տարեկան միջին խոնավությունը՝ 61% է: Ամառը շոգ է, տևական (4-5 ամիս), հաճախ ջերմաստիճանը բարձրանում է մինչև 40-42°C: Ձմեռը ցուրտ է, անամպ, անհողմ (հունվարին օդի միջին ջերմաստիճանը 10-20°C ցուրտ): Բնորոշ են լեռնահովտային քամիները: Քամու միջին արագությունը չի գերազանցում 3 մ/վրկ-ը: Քամու հիմնական ուղղություններն են՝ հյուսիս-արևելյան – 44% , արևելյան – 22%:

Մարզի տարածքը բնութագրվում է համեմատաբար միջին սեյսմիկ ակտիվությամբ: Հիմնական ուժեղ երկրաշարժի օջախները գտնվում են Մարզի տարածքից դուրս 70-80 կմ և ավելի հեռավորությամբ՝ Գառնիի, Սպիտակի օջախներ, ինչպես նաև Մարզում՝ Փարաքարի օջախը, որոնք կարող են ունենալ 7-8 բալ սեյսմիկ ազդեցություն: 8 բալ սեյսմիկ ազդեցության գոտում (Գառնիի օջախ) գտնվում են Մարզի Այգեկ, Արևաշատ, Բաղրամյան (Էջմ), Մերձավան, Մուսալեռ և Փարաքար բնակավայրերը, 7 բալանոց գոտում գտնվում են Մարզի 35 բնակավայրեր:

Մարզում չկան սողանքային օջախներ և քարաթափումների տարածքներ:

#### 2) Մարզի վարչական բաժանումը, բնակավայրերը, բնակչությունը

Մարզը կազմավորվել է 1996 թ-ին՝ նախկին Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի վարչական շրջանների միավորումից: Մարզը սահմանակից է՝ հարավ արևմուտքից Թուրքիային (130,5 կմ), հյուսիսից Արագածոտնի մարզին (84 կմ), արևելքից Արարատի մարզին (29 կմ) և Երևան քաղաքին (7 կմ): Մարզը կազմված է Արմավիր, Արաքս, Բաղրամյան, Մեծամոր, Վաղարշապատ, Փարաքար և Ֆերիկ համայնքներից, որոնք էլ իրեց մեջ ներառում են Արմավիր, Մեծամոր, Էջմիածին քաղաքային և 94 գյուղական բնակավայրերը, վարչական կենտրոնը՝ ք. Արմավիր: Մարզը զբաղեցնում է 1242 կմ<sup>2</sup>

տարածք, որը կազմում է ՀՀ ընդհանուր տարածքի 4.2%-ը: Մարզի բնակչության թվաքանակը կազմում է 324183 մարդ (2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ), որից՝ քաղաքներում 114030 մարդ, գյուղական համայնքներում 210153 մարդ, որից ըստ սեռի 158768 տղամարդ, 165415 կին, ըստ տարիքի՝ մինչև 2 տարեկան 9630 մարդ, 2-7 տարեկան 23624 մարդ, 7-7 տարեկան 56197 մարդ, 17 ից բարձր 234732 մարդ (աղյուսակ 1):

Բնակելի տների քանակը կազմում է 49718 միավոր, որից բազմաբնակարան բնակելի շենքերի քանակը՝ 849 միավոր, առանձնատներ՝ 48869: Բնակչության խտությունը 1 կմ<sup>2</sup> վրա կազմում է 230,66 մարդ: Ըստ համայնքների բաշխումը ներկայացված է աղյուսակ 2-ում:

### 3) Մարզի սոցիալ-տնտեսական բնութագիրը

Տնտեսության առաջատար ճյուղերն են գյուղատնտեսությունը, սննդի արդյունաբերությունը: Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 97067 հա, որից վարելահողեր՝ 41691 հա, բազմամյա տնկարքեր՝ 11499 հա, խոտհարքեր՝ 322 հա, արոտավայրեր՝ 21704 հա: Առաջատար տեղ են զբաղեցնում խաղողագործությունը, դաշտավարությունը, պտղաբուծությունը, մեղվաբուծությունը և անասնապահությունը: 2025 թվականի տվյալներով Մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմում է 59731 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 138980 գլուխ, խոզերինը՝ 21705 գլուխ, թռչուններինը՝ 1112873 զույգ թև:

#### **Մարզում գործող խոշոր կազմակերպություններից են՝**

– «ՄԱՊ» ՓԲԸ- գործում է 1995 թվականից զբաղվում է գինու և կոնյակի արտադրությամբ:

– «Նոյան պտուղ-բանջարեղենի վերամշակման գործարան» – գործում է 2012 թվականից «Եվրոթերմ» ընկերության մասնաճյուղ Վանանդ բնակավայրում, արտադրում է բնական հյութեր, մանկական սննդի արտադրության համար անհրաժեշտ խյուսեր և խտանյութեր, պահածոներ:

– «Երևանի կոնյակի գործարան ՓԲԸ Արմավիրի մասնաճյուղ» գործում է 1966 թվականից զբաղվում է գինու և կոնյակի արտադրությամբ:

– «Մարմ Լեյդ» ՍՊԸ 2018 թվականից շահագործվում է որպես պահածոների գործարան

– «Պոռչյանի կոնյակի գործարանի Արմավիրի մասնաճյուղ» զբաղվում է խաղողի մթերմար գինու և սպիրտի արտադրությամբ:

– «Բաղրամյանի ալրաղաց» ՍՊԸ զբաղվում է ալյուրի արտադրությամբ:

– «Ռաստր գործարան»- արտադրում է միացուցիչներ, որոնք օգտագործվում են զանազան սարքերում ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկություններ:

– «Մուսալեռ տպագրատուն» - գործում է 2007թ-ից իրականացնում է տպագրական գործունեություն:

### 4) Տրանսպորտային հաղորդակցման ուղիները

Մարզի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 605.8կմ, որից՝ միջպետական նշանակության՝ 103.3կմ, հանրապետական նշանակության՝ 96.1կմ, հանրապետական նշանակության մարզային ենթակայության՝ 197կմ և տեղական (մարզային) ենթակայության՝ 209.4կմ: Մարզի տարածքով է անցնում «Հարավ Կովկասյան» երկաթուղին 70 կմ երկարությամբ՝ Քարակերտ, Դալարիկ, Արաքս, Արմավիր, Էջմիածին երկաթուղային կայարաններով: Մարզում առկա է նաև Արմավիր- ՀԱԷԿ 15.3-կմ հատվածը, որը գործում է ըստ անհրաժեշտության (աղյուսակ 3):

Մարզի միջպետական նշանակության ճանապարհները բարվոք վիճակում են,

Մարզում առկա են 51 կամուրջներ՝ որից 5-ը երկաթուղային: Առկա են նաև 4 հատ 2x25 չափսերի գետնանցումներ Մարզի Փարաքար համայնքում (աղյուսակ 4):

### 5) Քիմիական, ճառագայթային, կենսաբանական /մանրէաբանական/ վտանգավոր

օբյեկտները

ա. Մարզի տարածքում քիմիական վտանգավոր օբյեկտներ չկան,

բ. Ճառագայթային վտանգավոր օբյեկտ է հանդիսանում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն:

Այն գտնվում է Արարատյան դաշտավայրի արևմտյան մասում, զբաղեցնում է 24 հա տարածք, կառուցապատված է 10 բալ սեյսմակայունության հաշվարկով: ՀԱԷԿ-ը գտնվում է Երևան քաղաքից 28 կմ դեպի արևմուտք: ՀԱԷԿ-ից 16 կմ դեպի հարավ անցնում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը: ՀԱԷԿ-ի հզորությունը կազմում է մոտ 400 ՄՎտ:

#### 6) Վտանգավոր հիդրոտեխնիկական կառույցները

Մարզի տարածքում է գտնվում Ակնալիճ բնական ջրամբարը, որի մակարդակը տարածքի ռելիեֆից ցածր է և հարակից բնակավայրերին ջրածածկման վտանգ չի սպառնում:

Մարզի տարածքում այլ բնական և արհեստական ջրամբարներ չկան, սակայն Ախուրյանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում Մարզի 30 բնակավայրեր ընկած են ջրածածկման վտանգի տակ, 24-ը՝ Ապարանի ջրամբարի ջրածածկման գոտում:

#### 7) Հրդեհապայթյունավտանգ օբյեկտները

Մարզի հրդեհապայթյունավտանգ օբյեկտներ են հանդիսանում Երևանի կոնյակի գործարան ՓԲԸ Արմավիրի մասնաճյուղը, Արմավիրի «ՄԱՊ» գինու-կոնյակի գործարանը, Պոռչյանի կոնյակի գործարանի մասնաճյուղ մթերման կետը, «Բաղրամյանի ալրաղաց» ՍՊԸ, «Մարմ Լեյդ» ՍՊԸ, Նոյան վերամշակման գործարան Եվրոթերմ ՓԲԸ, Մարզի տարածքում կառուցված թվով 41 գազալցակայանները, թվով 14 բենզալցակայանները և թվով 23 մեկտեղված բենզալցակայաններ ու գազալցակայաններ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հավելված 4-ի աղյուսակ 1-ում:

Հրդեհապայթյունավտանգ օբյեկտների շարքում կարելի է դասել նաև Մարզի «Քարակերտ», «Դալարիկ», «Արաքս», «Արմավիր» և «Էջմիածին» երկաթուղային կայարանները, որոնց տարածքում դյուրավառ նյութերի տեղափոխման ընթացքում վթարի հետևանքով կարող են առաջանալ պայթյուններ՝ հնարավոր ուղեկցվող հրդեհներով:

#### 8) Հանրակրթական հաստատություններ ու հասարակական նշանակության կառույցներ

Մարզում առկա են 119 դպրոցներ, որից՝ 5 ավագ դպրոցներ, 20 հիմնական դպրոցներ և 93 միջնակարգ դպրոցներ և 1 ռազմամարզական վարժարան: Գործում են միջնակարգ մասնագիտական 4 ուսումնական հաստատություններ:

Մարզում գործում են 78 մանկապարտեզներ:

#### 9) Բժշկական և այլ առողջապահական հիմնարկներ

Մարզում գործում են «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ (130 մահճակալ), «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ (75 մահճակալ), «Էջմիածին բժշկական կենտրոն» ՓԲԸ (160 մահճակալ), «Արմեդ բժշկական կենտրոն» ՓԲԸ (20 մահճակալ), «Հիսուսի Մանուկներ» առողջության կենտրոն ՓԲԸ, «Արմավիրի արյան փոխներարկման կենտրոն» ՓԲԸ բժշկական հիմնարկներն ու համայնքային 39 ԲՄԿ-ները:

Մարզում գործում է ՀՀ առողջապահության նախարարության «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ Արմավիրի մասնաճյուղը: Առողջապահական հիմնարկների մահճակալների ֆոնդը կազմում է 385 մահճակալ, լրացուցիչ կարող են ծավալել ևս 295 մահճակալ: Համալրված են 17 սանիտարական մեքենաներով, որոնք ապահովված են կապի շարժական միջոցներով:

#### 10) Պահեստներ /բազաներ/

Մարզում պահեստներ չկան, առկա են թվով 7 սննդամթերքի առաքման բազաներ, որից 3-ը Արմավիր քաղաքում, 4-ը Էջմիածին քաղաքում: Այդ բազաները պատկանում են անհատ ձեռներեցների և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների:

Հացամթերքի սպասարկման հիմնական օբյեկտ է հադիսանում «Բաղրամյանի ալրադագ» ՍՊԸ, որի այլուրի արտադրության տարեկան հնարավորությունը կարող է կազմել 160000-ից 170000 տոննա: Մարզում գործում են հացաթխման 44 միջին արտադրամասեր: Հացի արտադրության օրական միջին ծավալը կազմում է 4815կգ:

#### 11) Պատմամշակութային օբյեկտները

Մարզը հարուստ է տարբեր դարաշրջաններում կառուցված պատմամշակութային բարձրարժեք համալիրներով և հուշարձաններով: Մարզի տարածքով մեկ ցրված են միջնադարյան բազմաթիվ կառույցներ: Հայտնի են հատկապես Էջմիածնի Մայր Տաճար, Գայանե, Հոփսիմե, Շողակաթ եկեղեցիներն ու վանքերը, Սարդարապատ հուշահամալիրը իր պատմական թանգարանով և «Մուսալեռ» մասնաճյուղով, «Մեծամոր» պատմամշակութային թանգարանը:

### **5. Հնարավոր իրավիճակը և եզրակացություններ հնարավոր իրավիճակի գնահատումից**

#### 5.1 Հնարավոր իրավիճակը

Մարզում արտակարգ իրավիճակների (այսուհետ՝ ԱԻ) ծագման հիմնական վտանգներն են ՀԱԷԿ-ի վթարը, Գառնիի, Փարաքարի, Սպիտակի էպիկենտրոններում ուժեղ երկարաշարժերի առաջացումը, վտանգավոր նյութեր տեղափոխող ավտո և երկաթուղային տրանսպորտային միջոցների վթարները և Ախուրյանի ու Ապարանի ջրամբարների պատվարների փլուզումները:

Մարզում օդերևութաբանական և ագրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներ են ուժեղ քամիները, ուժեղ կարկտահարությունը, տեղատարափ անձրևը, ցրտահարությունը, երաշտը, խորշակը, որոնց հետևանքով տուժում են բնակավայրերի ցանցատարածությունները, խոտհարքները, բանջարաբոստանային կուլտուրաները, բնակելի ֆոնդը, գյուղատնտեսական կենդանիները:

Մարզի տարածքում հնարավոր է անասնահամաճարակի բռնկում հատկապես ամռան ամիսներին:

#### 1) Քիմիական, ճառագայթային, կենսաբանական հնարավոր իրավիճակը

##### ա. Հնարավոր քիմիական վարակման գոտիները

Շրջակա միջավայրի համար պոտենցիալ վտանգ ներկայացնող օբյեկտների և դրանց հարակից տարածքներում դիտարկման և մշտական հսկողության կազմակերպումն իրականացվում է Մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական հսկողության համակարգի կազմակերպությունների կողմից:

##### բ. Հնարավոր ճառագայթային աղտոտման գոտիները

ՀԱԷԿ-ին հարակից 10կմ գոտու մակերեսը կազմում է 314 կմ<sup>2</sup>: Այդ տարածքում ընկած են Մարզի 22 համայնք՝ 103913 բնակչությամբ, այդ թվում՝ նախահարձակ պաշտպանական միջոցառումների գոտի՝ (մինչև 5 կմ գոտի) ք. Մեծամոր, Արշալույս, Ակնալոճ, Մայիսյան, Ֆերիկ գյուղական բնակավայրերը՝ 23072 բնակչությամբ, շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտի՝ Արմավիր քաղաքը և 16 գյուղական բնակավայրեր՝ 80841 բնակչությամբ:

##### գ. Հնարավոր անասնահամաճարակները և դիսկի գոտում գտնվող բնակավայրերը

Մարզի Բաղրամյանի տարածաշրջանը հանդիսանում է գյուղատնտեսական կենդանիների տեղափոխման տարանցիկ գոտի, որի ժամանակ հնարավոր է անասնահամաճարակի բռնկում:

##### դ. Էպիֆիտոտիկ տեսակից վտանգավոր տարածքներ

Մարզում բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված ախտահարույց հիվանդություններ վերջին 40-50 տարիների ընթացքում չեն գրանցվել:

2) Ուժեղ երկրաշարժի դեպքում ստեղծված հնարավոր իրավիճակը

Մարզի տարածքը հատվում է բազմաթիվ սեյսմաակտիվ բեկվածքներով, որոնց համադրվում են տարբեր ուժգնության երկրաշարժերի օջախները՝ Գառնիի, Փարաքարի և Սպիտակի օջախները: Գառնիի օջախի ակտիվացման դեպքում՝

- **8-բալանոց գոտում կհայտնվեն Մարզի Այգեկ, Արևաշատ, Բաղրամյան /Էջմ./, Մերձավան, Մուսալեռ և Փարաքար բնակավայրերը: 7 բալանոց գոտում կհայտնվեն Մարզի 35 բնակավայրեր:**

Սպիտակի օջախի ակտիվացման դեպքում՝

Մարզի բոլոր բնակավայրերը հայտնվում են 7 բալ ինտենսիվության երկրաշարժի գոտում:

**7.5 բալ ինտենսիվության երկրաշարժի գոտում հայտնվում է միայն Լեռնամերձ բնակավայրը, որտեղ բոլոր շինությունները 1-2 հարկանի առանձնատներ են:**

Փարաքարի օջախի ակտիվացման դեպքում՝

Մարզի Փարաքար, Վաղարշապատ, Արաքս համայնքի բնակավայրերը հայտնվում են 6 բալ ինտենսիվության երկրաշարժի գոտում, 5 բալ ինտենսիվության երկրաշարժի գոտում կհայտնվեն Մարզի մնացած բնակավայրերը:

3) Հրդեհապայթյունավտանգ օբյեկտներում խոշոր հրդեհի կամ պայթյունի հետևանքով ստեղծված իրավիճակը

Մարզի հրդեհապայթյունավտանգ օբյեկտները հիմնականում կառուցված են բնակավայրերի բնակելի զանգվածներից դուրս, այդ պատճառով դրանց պայթյունների և ծագած հրդեհների ժամանակ բնակիչներին վտանգ չի սպառնում: Պայթյունի հետևանքով հարվածային ալիքի և ջերմային ալիքի ազդեցության սահմանները տատանվում են 50-100 մ: Հիմնական տուժողները հիշյալ օբյեկտների աշխատողներն են:

4) Պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում հայտնվող բնակավայրերը

Մարզում հիդրոտեխնիկական կառույցներ ջրամբարների տեսքով չկան, սակայն ՀՀ Շիրակի մարզում գտնվող Ախուրյանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում Մարզի 30 բնակավայրեր կհայտնվեն ջրածածկման վտանգի տակ, իսկ ՀՀ Արագածոտնի մարզում գտնվող Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում Մարզի 24 բնակավայրեր կհայտնվեն ջրածածկման վտանգի տակ:

5) Սելավավտանգ տարածքներ

Սելավային հոսքերի ժամանակ ջրածածկման գոտում են հայտնվում՝

- Թալիշի հեղեղատարի ողողման գոտում են գտնվում Մարզի Մայիսյան բնակավայրի գյուղատնտեսական հողատեսքերը և ք. Մեծամորի Այգեգործական թաղամասը:

- «Սելավ Մաստարա» հեղեղատարի ջրածածկման տարածքում են գտնվում Լեռնագոգ, Խանջյան, Լուկաշին, Նորապատ, Մրգաշատ բնակավայրերը և Արմավիր քաղաքի 108 թաղամասը:

- «Կոշ-Ուջան» հեղեղատարի ջրածածկման տարածքում են գտնվում Աղավնատուն, Արագած, Ծաղկալանջ բնակավայրերի առափնյա տնտեսություններն ու գյուղատնտեսական հողատեսքերը:

- Քասախ գետի ջրածածկման տարածքում են գտնվում Ամբերդ, Դողս, Ծիածան, Ծաղկունք, Հովտամեջ, Մրգաստան, Արտիմեդ, Խորոնք, Առատաշեն բնակավայրերի առափնյա տնտեսություններն ու գյուղատնտեսական հողատեսքերը:

- Մեծամոր /Սև ջուր/ գետի ջրածածկման տարածքում են գտնվում Ապագա, Լուսապուղ, Ջրառատ, Մեծամոր, Արաքս /Էջմ./ բնակավայրերի առափնյա տնտեսություններն ու գյուղատնտեսական հողատեսքերը:

- Արաքս գետի ջրածածկման տարածքում են գտնվում Երվանդաշատ, Բերքաշատ, Ջանֆիդա, Փշատավան, Արագափ, Մարգարա, Վարդանաշեն և Արաքս /Էջմ./ բնակավայրերի առափնյա տնտեսություններն ու գյուղատնտեսական հողատեսքերը:

5.2. Եզրակացություններ հնարավոր իրադրության գնահատումից

ԱՌ-ի առաջացման դեպքում Մարզում կառաջանան ծանր ինժեներական և բժշկական իրավիճակներ՝ կփլուզվեն շենքեր և շինություններ, կոմունալ-էներգետիկ համակարգի ենթակառուցյուններ, ճանապարհային և երկաթուղային կառույցներ, բնակչության կենսաապահովման համակարգի կազմակերպությունների կառույցներ, բնակչության շրջանում կունենանք զգալի թվով անվերադարձ և սանիտարական կորուստներ, գյուղատնտեսական կենդանիների, անասնակերի, սննդամթերքի և հումքի կորուստներ:

1) ՀԱԷԿ-ի հնարավոր ճառագայթային աղտոտվածության ազդեցությանը ենթակա բնակավայրերի շենք-շինությունների քանակը կկազմի 1725 միավոր, գյուղատնտեսական նշանակության հողատարածքը՝ 228 կմ<sup>2</sup>, ճառագայթային վարակվածության չափաբաժիններ ստացած բնակիչների քանակը կարող է կազմել 18009 մարդ, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը՝ 35258 գլուխ:

2) Ավերիչ երկրաշարժի գոտում կհայտնվեն՝

Գառնիի էպիկենտրոնի - 8 բալանոց գոտում 3814 շենքեր և շինություններ, որից բազմաբնակարան՝ 37 շենք, բնակիչների ընդհանուր թիվը կկազմում է 23650 մարդ, որից բազմաբնակարան շենքերում՝ 2815 մարդ: 7 բալանոց երկրաշարժի գոտում կհայտնվեն Մարզի բոլոր բնակավայրերը, Լեռնամերձ գյուղի՝ 7,5 բալ:

3) Ախուրյանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ջրածածկվող տարածքը կկազմի 298 կմ<sup>2</sup>, տուժած բնակչության թիվը 74290 մարդ, շենքերի թիվը՝ 16862 միավոր, գյուղ-կենդանիների քանակը պայմանականորեն՝ 49113 գլուխ, իսկ Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ջրածածկվող տարածքը կկազմի 150 քառ. կմ, տուժած բնակչության թիվը 53450 մարդ, շենքերի թիվը 10284 միավոր, գյուղատնտեսական կենդանիների քանակը 13119 գլուխ:

4) Սելավային հոսքերի դեպքում կստեղծվեն հետևյալ իրավիճակները.

- Թալիշի հեղեղատարի ողողման դեպքում բնակավայրերին էական վնաս չի պատճառվում, հեղեղումների ենթակա են 240 հա գյուղատնտեսական հողեր, հեղեղումների տարածքում հնարավոր գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը պայմանականորեն կարող է կազմել 213 միավոր:

- «Սելավ Մաստարա» հեղեղատարի ողողման դեպքում հնարավոր հեղեղումների ենթակա են 250 հա գյուղատնտեսական հողեր, հեղեղումների տարածքում հնարավոր գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կարող է կազմել 1510 միավոր:

- Քասախ գետի ողողման դեպքում հնարավոր հեղեղումների տարածքում կարող են հայտնվել մոտ 800հա գյուղատնտեսական հողեր, 1239 գլուխ գյուղատնտեսական կենդանիներ:

- Մեծամոր /Սև ջուր/ գետի ողողման դեպքում հնարավոր հեղեղումների տարածքում կարող են հայտնվել 1182 հա գյուղատնտեսական հողեր, 506 գլուխ գյուղատնտեսական կենդանիներ:

- Արաքս գետի ողողման դեպքում հնարավոր հեղեղումների տարածքում կարող են հայտնվել 4129 հա գյուղատնտեսական հողեր, 4402 գլուխ գյուղատնտեսական կենդանիներ: Սահմանային ուղեկալների տարածքներում բացի բնակչությանը հատկացված գյուղատնտեսական հողատեսքերի լվացումից, հնարավոր է առաջանան նաև կապի ստորգետնյա կոմունիկացիաների վթարներ:

### III. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

#### 6. Կառավարման կազմակերպումը

##### 6.1 Կառավարման մարմինները

Մարզային նշանակության ԱՌ-ների դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների ընդհանուր ղեկավարումը, իրականացնում է Մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը՝ որի նախագահն է հանդիսանում ՀՀ Արմավիրի մարզպետը:

Համայնքային և տեղական նշանակության ԱՌ-ների դեպքում՝ բնակչության պաշտպանության միջոցառումների ընդհանուր ղեկավարումը իրականացվում է համապատասխանաբար՝ համայնքային և օբյեկտային արտակարգ իրավիճակների հանձնաժողովների կողմից: Նշված հանձնաժողովներին իրենց կողմից իրականացված միջոցառումների մասին պարբերաբար

զեկուցում են ՀՀ Արմավիրի մարզպետին և ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ ՆԳՆ) ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության (այսուհետ ՄՓՎ) պետին:

Մարզային ԱԻ հանձնաժողովը ղեկավարում է բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ամբողջ գործընթացը:

Մարզի ԱԻ հանձնաժողովի անաշխատունակության դեպքում կառավարումն իրականացվում է ՀՀ արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի (կամ Շիրակի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի) կողմից:

Գործում է Մարզային տարահանման հանձնաժողովը, որի նախագահն է ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալը: Մարզային տարահանման հանձնաժողովը ղեկավարում է Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների դեպքում իրականացվող բոլոր տարահանման միջոցառումները:

Մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովին կից ստեղծվում են նյութատեխնիկական միջոցներով և սննդամթերքով ապահովող, միջազգային մարդասիրական օգնությունն ընդունող- բաշխող և այլ աշխատանքային խմբեր:

ԱԻ-ի ծագման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումները նախապես՝ մինչև արտակարգ իրավիճակների Մարզային հանձնաժողովի նիստի գումարումը, կազմակերպում է Արմավիրի ՄՓՎ ստորաբաժանումների ուժերով՝ ընդգրկելով Շիրակի զինվորական կայազորի, բժշկական հիմնարկների, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Մարզային ստորաբաժանումների, համայնքների ուժերը և միջոցները:

### 6.2 Կառավարման կետերը

ՄՓՎ պետը, ստանալով ԱԻ ծագման մասին հաղորդագրությունը, աղետի գոտում ծավալում է օպերատիվ շտաբ և փրկարարական աշխատանքների տեղամասեր, ղեկավարման կառավարման կետեր, կապ է հաստատում նրանց և ՀՀ ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնի (այսուհետ՝ ՕԿԿ), Շիրակի զինվորական կայազորի և ՀՀ ՆԳՆ ոստիկանության մարզային օպերատիվ հերթապահների միջև:

ՕԿԿ-ից ԱԻ առաջացման մասին ազդարարվելուց հետո, ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալները ժամանում են ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ: Ծավալվում է Մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովը:

Մարզային ԱԻ հանձնաժողովը կառավարումն իրականացնում է ստեղծված կառավարման կենտրոններից (կետերից), իսկ անհրաժեշտության դեպքում՝ պահեստային կամ շարժական կենտրոններից (կետերից)։

### 6.3 Կապի և ազդարարման համակարգը

Մարզի տարածքում ԱԻ սպառնալիքի կամ առաջացման մասին ՕԿԿ-ից ազդարարվում է մարզպետին, ԱԻ հանձնաժողովին և համայնքների ղեկավարների Տարահանման հանձնաժողովի անդամների ազդարարումն իրականացվում է տարահանման հանձնաժողովի նախագահի կառավարման կետից:

Ազդարարման համակարգի խափանման դեպքում Մարզի ղեկավար կազմի ազդարարումն իրականացվում է սուրհանդակների միջոցով, իսկ տուժած բնակչության իրազեկումը՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության և ՀՈԳՎ Արմավիրի, Բաղրամյանի և Վաղարշապատի բաժինների շարժական ուժերով ու միջոցներով:

Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի կառավարման կենտրոնից քաղաքային ու միջքաղաքային հեռախոսակապի միջոցով կապ է կազմակերպվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հետ:

ՕԿԿ-ի և Արմավիրի ՄՓՎ միջև կապը կազմակերպվում է կարճալիք N2 ժադիոցանցով:

Կարճալիք N 3 և գերկարճալիք N 3 ռադիոցանցերով կապ է կազմակերպվում Մարզի մշտական գործող հանձնաժողովների, Արմավիրի ՄՓՎ, Մարզի փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարների և հասարակական փրկարարական ուժերի միջև:

Գերկարճալիք N 4 ռադիոցանցերով կապը կազմակերպվում է Մարզի մշտական գործող ԱԻ հանձնաժողովի, Մարզի տարահանման հանձնաժողովի, համայնքային արտակարգ իրավիճակների հանձնաժողովների միջև: Մարզային կառավարման կետերի միջև կապը կազմակերպվում է նաև քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի միջոցով:

Պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարներն իրենց հերթին կազմակերպում են ենթակա անձնակազմի ազդարարում և հավաք, ստեղծում օպերատիվ խմբեր և կազմակերպում դրանց աշխատանքը:

Կառավարման մարմինների կապով ապահովումը իրականացվում է «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից:

Պլանում ներգրավված մարմինների անձնակազմերից յուրաքանչյուրը, զգալով աղետի բնորոշ երևույթներ կամ տեսնելով համատարած փլուզումներ, հնարավորության դեպքում ներկայանում է իր աշխատավայր՝ առանց ազդարարվելու:

## **7. Հետախուզության կազմակերպում և իրականացում**

### **7.1 Ընդհանուր հետախուզություն**

Հետախուզության անմիջական կազմակերպիչներն են ՀՀ Արմավիրի մարզպետը և Արմավիրի ՄՓՎ-ը պետը: Մարզի ամբողջ տարածքում հետախուզության ընդհանուր համակարգումն իրականացնում է Արմավիրի ՄՓՎ-ը պետը: Հետախուզության նպատակը, վտանգի աղբյուրների բացահայտումը, իրավիճակի գնահատումը, տուժածների հայտնաբերումը, երկրորդային խոցող գործոնների բացահայտումը, տրանսպորտային ուղիների տեխնիկական վիճակը, անցանելիությունը, ուժերի և միջոցների հաշվարկը և թիրախային արձագանքման կազմակերպումը, հիմնական ուղղությունները, ներգրավվող ուժերն ու միջոցները որոշում է ՄՓՎ պետը:

Հետախուզության ընթացքում՝ ելնելով ԱԻ-ի բնույթից, ճշտվում են փլուզման վայրերը, ջրածածկման վայրերը, շենք-շինությունների ավերվածության աստիճանը, գտնվելու վայրը, տուժած բնակչության վիճակը և քանակը, սանիտարական և անվերադարձ կորուստները, փլատակների տակ գտնվող մարդկանց տեղը, մասնակի ավերված շենք-շինությունների քանակը և վիճակը, կոմունալ էներգետիկ համակարգերի վնասվածության աստիճանը, մոտեցման ուղիները, ճանապարհային ցանցի, ինժեներական կառույցների վիճակը, շրջանցման ուղիները, հրդեհների քանակները և առաջացման հնարավոր վայրերը:

Հետախուզություն իրականացնող բոլոր ուժերի փոխգործողությունները կազմակերպվում են՝ ըստ խնդիրների, ուղղությունների, օբյեկտների, ժամանակի և գործողությունների տեսակների: Հետախուզական ուժերի համագործակցությունն իրականացվում է համաձայն նախապես մշակված փոխգործողությունների պլանի:

Մարզի տարածքում հետախուզությունը ղեկավարվում է Մարզի կառավարման կենտրոնից:

### **7.2 Հատուկ հետախուզություն**

Հատուկ հետախուզության անմիջական ղեկավարումն իրականացնում են հատուկ հետախուզության ուժեր ստեղծած կազմակերպությունների ղեկավարները:

ԱԻ սպառնալիքի կամ ծագման դեպքում հատուկ հետախուզությունը կազմակերպում են Մարզի բնակչության պաշտպանության համակարգում ներառված պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավարները՝ ելնելով Մարզի բնակչության պաշտպանության համակարգի հիմնական խնդիրներից, ինչպես նաև իրենց կազմակերպության շահերից:

Անհրաժեշտության դեպքում Մարզի բնակչության պաշտպանության համակարգում ներառված պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավարները ելնելով ստեղծված իրադրությունից՝ օպերատիվ խնդիրներ լուծելու նպատակով, անձնական նախաձեռնությամբ կազմակերպում են հետախուզության, առանց վերադասից կարգադրություն ստանալու:

Մարզի հետախուզական ուժերի կազմի մեջ մտնում են՝

- Արմավիրի ՄՓՎ հրշեջ փրկարարական ջոկատների հետախուզական խմբերը.
- Շիրակի գինվորական կայազորի հետախուզական խմբերը.
- Մարզի հատուկ հետախուզական ուժերը.

- ՀՀ Առողջապահության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ Արմավիրի մասնաճյուղը.

- ՀՀ Շրջակա միջավայրի Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության Արմավիրի օդերևութաբանական կայանը:

Իրադրության վերաբերյալ ձեռք բերված տվյալները վերլուծվում և զեկուցվում են համապատասխան ղեկավարներին՝ համաձայն կառավարման սխեմայի.

Հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով: Հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անմիջապես.

Հետախուզական ուժերը պատրաստականության են բերվում Ժ+1.30ր:

### **8. Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը**

#### **8.1 Ուժերի պատրաստականության բերումը**

Հետախուզական տվյալները հավաքվում և վերլուծվում են ԱԻ հանձնաժողովի աշխատանքային խմբում, հաշվառվում են Մարզի փրկարարական ուժերի կազմը, վիճակն ու փրկարարական աշխատանքների կատարման հնարավորությունը և վերլուծության արդյունքում որոշվում են ԱԻ հետևանքների ծավալները, փրկարարական աշխատանքների բնույթը, ծավալը և անցկացման հաջորդականությունը, Մարզի վթարավերականգնողական ուժերի ու բնակչության ներգրավման անհրաժեշտությունը:

Փրկարարական և վթարավերականգնողական ուժերի պատրաստականության բերման ժամկետն է՝ Ժ+ 6 ժամ:

#### **8.2 Ուժերի խմբավորումների ստեղծումը**

Մարզային փրկարարական, վթարավերականգնողական, հասարակական փրկարարական խմբերի և բնակչության բազայի հիման վրա կազմվում է ուժերի խմբավորում որը նախատեսված է փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելու համար: Աղետի գոտում փրկարարական աշխատանքներ իրականացնող ուժերն ու միջոցները կազմված են՝

1) առաջին էշելոնից, որը նախատեսված է իրավիճակը բացահայտելու, գնահատելու, փրկարարական աշխատանքներ սկսելու և հետագայում ժամանող ուժերի ներգրավումն ապահովելու համար: Ընդգրկում են՝

- ՄՓՎ երեք հրշեջ փրկարարական ջոկատների 2-ական խմբեր

- ոստիկանության Մարզային վարչության հասարակական կարգի պահպանման ուժերն ու միջոցները,

- Շիրակի գինվորական կայազորի ուժերն ու միջոցները,

- աղետի գոտու համայնքների հասարակական կարգի պահպանման կազմավորումները՝ թվով

48 խումբ:

2) երկրորդ էշելոնից, որը նախատեսված է փրկարարական աշխատանքների ծավալը կտրուկ ընդլայնելու համար: Ընդգրկվում են Մարզի մշտական պատրաստականության ուժերը՝

- կապի, կոմունալ-էներգետիկ համակարգի կազմակերպությունների վթարավերականգնողական խմբերը՝ 17 խումբ 62 մարդ անձնակազմով,

- Մարզի համայնքների փրկարարական կազմավորումները՝ 97 խումբ 668 մարդ անձնակազմով:

3) երրորդ էշելոնից կամ պահուստից, որը նախատեսված է անսպասելի ծագող խնդիրների լուծման համար: Ընդգրկվում են երկրորդ էշելոնում չընդգրկված Մարզային և համայնքային ուժերը, հասարակական փրկարարական խմբերը և ներգրավվող բնակչությանը:

#### **8.3 Դեպի փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման տեղամասեր երթի կազմակերպումը**

1) Դեպի աշխատանքային տեղամասեր փրկարարական ուժերի մուտքն ապահովելու համար նախատեսվում են փրկարարական ուժերի առաջարժույթը (մուտքն աղետի գոտի) ապահովող խումբ և սանիտարական խմբեր: Տեխնիկայի մուտքը աղետի գոտի նախատեսվում է՝

- առաջինը՝ թրթուրավոր տեխնիկայի մուտքը,

- այնուհետև՝ անվավոր մեքենաների մուտքը:

Փրկարարական ուժերի դեպի աղետի գոտու աշխատանքային տեղամասեր շարայունների երթևեկության անվտանգությունն ապահովվում է պարեկային ծառայության միջոցներով:

2) ԱՌ Մարզային հանձնաժողովի նախագահը փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով, աղետի գոտին բաժանում է աշխատանքային տեղամասերի, նշանակում տեղամասերի ղեկավարներ:

Աշխատանքային տեղամասերի ղեկավարները մինչև փրկարարական աշխատանքների սկիզբը, կազմակերպում են տվյալ աշխատանքային տեղամասում գործող ուժերի համագործակցությունը, որոշում են՝

- աշխատանքների կատարման կարգը և հաջորդականությունը՝ ըստ կատարման ժամանակի.

- ինժեներական տեխնիկայի օգտագործման կարգը՝ աշխատատար աշխատանքներն իրականացնելու ընթացքում.

- համաձայնեցնում են ներգրավված ուժերի գործողությունները ըստ կատարման տեղի և ժամանակի.

- կառավարման և կապի կազմակերպման կարգը ստորաբաժանումների և կազմավորումների հրամանատարների միջև.

#### **9. Փոխգործողությունների կազմակերպումը**

**9.1 ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ներքին գործոցի նախարարության ոստիկանության հետ.**

Ամավիրի ՄՓՎ, Մարզում վարչական տարածքում մշտական տեղակայման վայրեր ունեցող ՀՀ ՊՆ զորամասերի, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Մարզի ստորաբաժանումների, ՀՀ ազգային անվտանգության Արմավիրի մարզային վարչության հետ փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են կապված ԱՌ բնույթից: Փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են ըստ վայրի, խնդիրների և ժամանակի:

Փոխգործողությունները պլանավորվում են ըստ ուղղությունների՝ ազդարարման, ընդհանուր և հատուկ հետախուզության, հասարակական կարգի պահպանման, երթևեկության անվտանգության ապահովման, փրկարարական և վթարավերականգնողական ուժերի տրամադրման ուղղությամբ:

Փոխգործողությունների պլանների համաձայն՝ ԱՌ դեպքում, նշված պետական կառավարման մարմինների ղեկավարների ազդարարումն իրականացնում է ՀՀ ՆԳՆ 112 ՕԿԿ-ն, նախատեսված ուժերի ազդարարումը, նրանց փրկարարական աշխատանքներին մասնակցությունը, նյութատեխնիկական ապահովումն իրականացնում են տվյալ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարները:

#### **9.2 Հարևան մարզերի հետ.**

Փոխգործողությունները հարևան մարզերի հետ կազմակերպվում է լիազոր մարմին Մարզի ԱՌ հանձնաժողովի աշխատանքային մարմնի կողմից ներկայացված հայտերի համաձայն՝ փրկարարական ուժերի, ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների լրացուցիչ պահանջարկի դեպքում:

### **IV. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆ ՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

#### **10. Ինժեներական ապահովում**

Մարզում ինժեներական ապահովման պատասխանատուն է Արմավիրի մարզպետի աշխատակազմի ոլորտը համակարգող վարչությունը: Ինժեներական ապահովման խնդիրներն են՝

1) ինժեներական հետախուզության կազմակերպումը, արդյունքների վերլուծումը և գնահատումը, անհրաժեշտ փրկարարական ու վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

2) փողոցների, ճանապարհների անցանելիության ապահովման միջոցառումների իրականացումը.

3) բնակչությանը տեղափոխելու, տարահանման ուղիների անցանելիության ապահովումը.

4) փրկարարական ուժերի՝ վնասված օջախներին մոտեցման ապահովումը.

5) կառավարման կետերի նախապատրաստումը և համապատասխան գույքով հագեցումը.

6) վնասված կամուրջների ուսումնասիրությունը և գետանցումների ապահովումը.

7) բնակչության տարահանման կետերի նախապատրաստումը.

8) բնակչության՝ խմելու ջրով ապահովումը.

### **11. Բժշկական ապահովում**

Մարզում բժշկական ապահովումն իրականացնում են «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ (130 մահճակալ), «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ (75 մահճակալ), «Էջմիածին բժշկական կենտրոն» ՓԲԸ (160 մահճակալ), «Արմեդ բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Հիտաի Մանուկներ» առողջության կենտրոն ՓԲԸ, «Արմավիրի արյան փոխներարկման կենտրոն» ՓԲԸ բժշկական հիմնարկներն ու համայնքային 39 ԲՄԿ-ները: Այս կազմակերպություններում մահճակալների ծավալման հնարավորությունները ներկայացված է աղյուսակ 5-ում:

Բժշկական ապահովման համար պատասխանատու է Արմավիրի մարզպետի ոլորտը համակարգող վարչությունը: Տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովումը սանիտարական տրանսպորտով իրականացվում է ծառայության կողմից, այլ տրանսպորտային միջոցներով՝ տրանսպորտի և կապի ծառայությունների կողմից:

Փրկարարական կազմավորումների բժշկական ապահովումը իրականացվում է բժշկական օգնություն ցուցաբերող բրիգադների ուժերով:

### **12. Հասարակական կարգի ապահովում**

Հասարակական կարգի ապահովումը Մարզում կազմակերպվում է բնակչության տարահանման գոտիներում հասարակական կարգի պահպանության, տարահանված բնակչության գույքի և նյութական արժեքների պահպանման, հատուկ, կարևորագույն օբյեկտների պահպանության, պարեկային ծառայության, փրկարար ուժերի մուտքի և տարահանման երթուղիներում ճանապարհային երթևեկության անվտանգության միջոցառումների իրականացման նպատակով, ինչպես նաև՝ աղետի ժամանակ բնակչության կորուստների հաշվառման համար:

Հասարակական կարգի ապահովումն իրականացնում է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Արմավիրի, Վաղարշապատի և Բաղրամյանի բաժինները: Արմավիրի ՄՓՎ հետ կազմակերպվում է սերտ համագործակցություն՝ հասարակական կարգի պահպանության, պարեկային ծառայության, ինչպես նաև փրկարարական աշխատանքների կազմակերպման հարցերով:

### **13. Տրանսպորտային ապահովում**

Տրանսպորտային ապահովումն իրականացնում է ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից:

Մարզում տրանսպորտային ապահովման համար պատասխանատու է Արմավիրի մարզպետի աշխատակազմի ոլորտը համակարգող վարչությունը: Տրանսպորտային ապահովման նպատակով պահանջվում են՝

1) մարդատար ավտոմեքենաներ՝ փրկարարական կազմավորումներ տեղափոխելու և աղետի գոտուց տուժած բնակչությանը տարահանելու համար՝

2) ավտոբուսներ 200 միավոր, միկրոավտոբուսներ 600 միավոր.

3) նյութատեխնիկական և առաջին անհրաժեշտության միջոցներ աղետի գոտի տեղափոխելու համար՝ բեռնատարներ 500 միավոր.

4) վառելիք և ջուր աղետի գոտի տեղափոխելու, ինչպես նաև գործող տրանսպորտային միջոցների լցավորումն ապահովելու համար.

5) բենզատարներ 6 միավոր, ջրատար ավտոմեքենաներ 10 միավոր:

#### **14. Հակահրդեհային ապահովում**

Մարզի հակահրդեհային ապահովումն իրականացվում է ՄՓՎ Արմավիրի, Վաղարշապատի և Բաղրամյանի ՀՓՋ-ների ուժերով և միջոցներով, որը ներառում է հրշեջ մարտական մեքենաներ 9 միավոր, անձնակազմ 21 մարդ մեկ հերթափոխում:

Ստորաբաժանումների հրդեհաշիջման և փրկարարական գործողությունների շարքին են դասվում հրդեհի վայր մեկնելը, հրդեհի հետախուզումը, մարդկանց փրկումը և հրդեհի մարումը:

Հրդեհային պահպանության տեսակետից առաջնահերթ արձագանքվում են՝

- պետական կառավարման տարածքային մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերը.

- պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, բարձր վտանգավորություն ներկայացնող, հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող ու հրդեհապայթուցանավտանգ կազմակերպությունների վարչական շենքերը,

- էներգամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, կապի, առողջապահական ու բնակչության կենսաապահովման կազմակերպությունների շենք-շինությունները:

- Հակահրդեհային անվտանգության ապահովման համար պատասխանատու է Արմավիրի ՄՓՎ-ն:

#### **15. Ճառագայթային, քիմիական, կենսաբանական պաշտպանության միջոցառումներ**

1) Ճառագայթային, քիմիական, կենսաբանական պաշտպանության միջոցառումներն են՝

- արտակարգ իրավիճակներում շրջակա միջավայրի օբյեկտների (հողի, օդի, ջրի, բուսա-ծածկույթի, սննդամթերքի, սննդահումքի, անասնակերի) ռադիոակտիվ, քիմիական ու մանրէաբանական աղտոտվածության օպերատիվ որակական ցուցանշումը.

- շրջակա միջավայրից վերցված փորձանմուշներում՝ լաբորատոր պայմաններում ռադիոակտիվ, քիմիական նյութերի ու մանրէների քանակի որոշումն ու եզրակացության տրամադրումը.

- մշտական հսկողության արդյունքների հիման վրա ռադիոակտիվ, քիմիական ու վարակիչ հիվանդությունների հարուցիչներից բնակչության և գյուղատնտեսության պաշտպանության առաջնահերթ միջոցառումների իրականացումը.

- ճառագայթային, քիմիական, կենսաբանական աղտոտվածության գրանցման դեպքում բնակչության և ներգրավվող ուժերի պաշտպանության կազմակերպումը, որը ներառում է՝

ա/ բնակչությանը և ուժերի անհատական պաշտպանության միջոցներով և ճառագայթային, քիմիական հետախուզության սարքերով ապահովումը ըստ բաշխման կարգի,

բ/ մարդկանց սանիտարական մշակման և հագուստի, տրանսպորտի, շինությունների ու տարածքների գազազերծման /ապակտիվացման/ կազմակերպումը,

գ/ խմելու ջրի սանիտարական հսկողության և հակահամաճարակային միջոցառումների իրականացումը:

2) Մարզում ճառագայթային, քիմիական, կենսաբանական պաշտպանության միջոցառումներն իրականացնում են՝

-Արմավիրի մարզային սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը,

- ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ Արմավիրի մասնաճյուղը,

- Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության

ճառայության Արմավիրի օդերևութաբանական կայանը,

-ՀԱԷԿ- ի ճառագայթային, քիմիական պաշտպանության ուժերը

- ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի ՄՓՎ:

Մարզում ճառագայթային, քիմիական, կենսաբանական պաշտպանության պատասխանատուներն են Արմավիրի մարզպետի աշխատակազմի ու որտղ համակարգող վարչությունը և Արմավիրի ՄՓՎ-ն:

**16. Տեղեկատվության և բնակչության իրազեկման ապահովում**

Հանրային իրազեկմանն ուղղված գործընթացներն ապահովում է Միջգերատեսչական միացյալ լրատվական կենտրոնը (այսուհետ՝ ՄՄԼԿ): ՄՄԼԿ-ն համակարգում է ՁԼՄ-ների աշխատանքը, վերջիններիս ապահովում անհրաժեշտ տեղեկատվությամբ, պատասխանում հասարակության հարցերին, ամփոփում և բնակչությանը տեղեկատվություն ներկայացնում կառավարման մարմինների որոշումների ու ձեռնարկվող քայլերի մասին, հետևում դրսի աղբյուրներից ներթափանցող տեղեկատվությանը, կազմակերպում է ՁԼՄ-ների ներկայացուցիչների տեղափոխումը:

ՄՄԼԿ-ն Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ և Հայաստանի հանրային ռադիոյով «Հատուկ թողարկում» խորագրի ներքո պարբերաբար հեռարձակվում է տեղեկատվություն բնակչության վարքականոնների, իրավիճակի, հետագա հնարավոր զարգացումների և իրականացվելիք միջոցառումների մասին:

Մարզում տեղեկատվության ապահովման համար պատասխանատու է ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ոլորտը համակարգող վարչությունը:

**17. Հիդրոոդերևութաբանական ապահովում**

Հիդրոոդերևութաբանական ապահովումն իրկանացնում է ՀՀ Շրջակա Հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության Արմավիրի օդերևութաբանական կայանը կողմից, Մարզում կանխատեսվող և փաստացի հիդրոոդերևութաբանական պայմանների մասին տեղեկատվության ապահովման պատասխանատուն է Արմավիրի օդերևութաբանական կայանը: Հիդրոոդերևութաբանական պայմանների վերաբերյալ տեղեկատվությունը ՄՓՎ-ին հաղորդվում է յուրաքանչյուր օր առավոտյան ժամը 7.00-ին և երեկոյան ժամը 19.00-ին: Արտակարգ իրավիճակներում տեղեկատվության հաղորդման պարբերականությունը կարող է փոխվել կախված տարվա եղանակից և եղանակային տեսության հրատապության աստիճանից:

**18. Նյութատեխնիկական ապահովում**

Նյութատեխնիկական և սննդամթերքի ապահովումը ներառում է արեւտի գոտու տուժած բնակչության և փրկարարական ուժերի կենսաապահովման համար սննդի և առաջին անհրաժեշտության միջոցների ժամանակին տեղափոխումը և բաշխումը:

Մարզում նյութատեխնիկական և սննդամթերքի ապահովման պատասխանատուն է Արմավիրի մարզպետի աշխատակազմի ոլորտը համակարգող վարչությունը վարչությունը:

Վառելիքով, քայուղերով, ավտոպահեստամասերով տրանսպորտային միջոցներին ապահովումը, որոնք մասնակցում են ՓԱՎ աշխատանքներին իրականացվում է շարժական լիցքավորման, վերանորոգման կայանների միջոցով: Տուժած բնակչությանը և ներգրավված ուժերին ջրով և տաք սննդով, հագուստ-հանդերձանքով ապահովումը իրականացվում է շարժական սննդի կետերի և հագուստ-հանդերձանքի շարժական բաշխման կետերի միջոցով: Տուժածների տեղաբաշխման վայրերում առաջին անհրաժեշտության միջոցներով ապահովումն իրականացվում է համապատասխան բաշխման կետերից:

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի

գլխավոր քարտուղար



Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ Արմավիրի մարզի բնութագրի ը

Ը/Ը	Համայնք	Բնակավայրի անվանումը	Բնակչության թվաքանակը	մինչև 2 տ	2-7 տ	7-17 տ	17-ից բարձր	
							կին	տղամարդ
1	2	3	4	5	6	7	8	9
1.		Ք.Արմավիր	39620	1228	2971	5744	14897	14780
2.		Մյանիկյան	4579	137	320	778	1679	1665
3.		Հացիկ	2597	77	180	438	959	943
4.		Խանջյան	2179	65	152	370	802	790
5.	Արմավիր	Լուկաշին	2798	83	195	475	1030	1015
6.		Նորավան	1380	42	103	200	518	517
7.		Մայիսյան	2182	67	163	316	820	816
8.		Սարդարապատ	4579	137	320	778	1679	1665
9.		Այգեվան	1848	55	129	314	679	671
10.		Լենուրի	1770	53	123	300	652	642
11.		Արաքս	1743	52	122	296	640	633
12.		Ք. Մեծամոր	12737	395	955	1846	4786	4755
13.		Ալաշկերտ	2107	63	147	358	775	764
14.		Անապիճ	3358	104	251	486	1262	1255
15.		Ամասիա	1070	32	74	181	395	388
16.		Այգեշատ	1903	57	133	323	700	690
17.		Արազպի	1615	42	129	372	572	500
18.		Արզավանդ	2621	69	210	603	880	859
19.	Մեծամոր	Արմավիր	3238	97	226	550	1190	1175
20.		Արտաշար	1376	42	103	199	517	515
21.		Արևիկ	3049	94	228	442	1146	1139

22.	Բանբակաշատ	3673	110	257	624	1347	1335
23.	Բերքաշատ	643	19	45	109	240	230
24.	Գետաշեն	2362	62	189	544	805	762
25.	Երեզնուտ	2272	70	170	329	854	849
26.	Երասխահուն	1744	46	140	402	592	564
27.	<del>Զարթոնք</del>	<del>2262</del>	<del>70</del>	<del>169</del>	<del>327</del>	<del>850</del>	<del>846</del>
28.	Հայկական	1545	40	123	355	520	507
29.	Մարգարա	1392	36	112	320	470	454
30.	Մրգաշատ	6006	186	450	870	2258	2242
31.	Նայբանդյան	4611	220	369	1061	1050	1011
32.	Նոր Արմավիր	2016	60	141	342	743	730
33.	Նոր Արտազերտ	1656	44	133	381	570	528
34.	Նոր Կեսարիա	1707	51	119	290	630	617
35.	Նորապատ	2566	76	179	436	945	930
36.	Շենական	1766	52	123	300	650	641
37.	Ջանֆիրա	3466	91	278	798	1169	1130
38.	Ջրաշեն	918	27	64	156	340	331
39.	Վարդանաշեն	1193	35	83	202	440	433
40.	Տանձուտ	2143	55	171	492	720	705
41.	Տարոնիկ	2363	73	177	342	888	883
42.	Փշատավան	2503	65	201	576	850	811
43.	Ակնաշեն	1826	48	147	420	611	600
44.	Ապագա	2090	55	168	481	721	665
45.	Առատաշեն	3085	96	231	447	1159	1152
46.	Արաքս	1877	49	151	432	640	605
47.	Արտինետ	2050	61	143	348	758	740
48.	Գայ	3930	103	315	904	1358	1250
49.	Գրիբոյեղով	2164	57	174	498	735	700
50.	Լուսագյուղ	1078	28	87	248	365	350
51.	Խրոյոնք	2840	88	213	411	1067	1061

52.	Հայկաշեն	1336	35	107	308	454	432
53.	Մեծամոր	1443	38	116	332	500	457
54.	Ջրառատ	3455	90	275	795	1190	1105
55.	Ջրարբի	1751	52	122	297	645	635
56.	Ք. Էջմիածին	61670	1850	4316	10483	22561	22460
57.	Ռոսիտատ	3016	90	211	512	1110	1093
58.	Աղավնատուն	3547	109	266	514	1333	1325
59.	Ամբերդ	1668	43	133	383	574	535
60.	Արագած	2963	91	222	429	1114	1107
61.	Ալգեշատ	1657	43	132	380	572	530
62.	Արշարույս	4296	133	322	622	1615	1604
63.	Գեղակերտ	2871	89	215	416	1079	1072
64.	Դաշտ	983	29	68	167	364	355
65.	Դողս	1541	40	123	354	520	504
66.	Լեռնամերձ	494	14	34	83	188	175
67.	Ծաղկալանջ	1583	49	118	229	595	592
68.	Ծաղկունք	1483	38	118	341	506	480
69.	Ծիածան	1263	39	94	183	474	473
70.	Հայթաղ	3076	95	230	446	1156	1149
71.	Հոկտանեց	1285	40	96	186	483	480
72.	Մոսթեալկան	933	27	65	158	345	338
73.	Մրգաստան	1221	31	97	280	413	400
74.	Շահումյան	1436	43	100	244	529	520
75.	Փարաքար	6958	208	487	1182	2550	2531
76.	Թաիրով	3083	92	215	524	1132	1120
77.	Մերձալան	4255	127	297	723	1563	1545
78.	Ալգեկ	1704	51	119	289	627	618
79.	Քարոսմյան	3120	93	218	530	1150	1129
80.	Նորակերտ	3388	101	237	575	1245	1230
81.	Մոսալեռ	3290	98	230	559	2113	1190

**Փարաքար**

82.	Արևաշատ	1992	51	159	458	679	645
83.	Պտորուք	2174	65	152	369	800	788
84.	<b>Բաղրամյան</b>	1089	32	76	185	406	390
85.	Դալարիկ	4176	125	292	709	1534	1516
86.	Քարակերտ	4520	135	316	768	1657	1644
87.	<b>Արզնա</b>	<b>633</b>	<b>18</b>	<b>44</b>	<b>107</b>	<b>236</b>	<b>220</b>
88.	Լեռնագոգ	2507	75	175	426	926	905
89.	Շենիկ	1082	32	75	183	405	387
90.	Կողբական	157	4	10	26	62	55
91.	Բազարան	729	19	58	167	248	237
92.	Երվանդաշատ	749	19	59	172	264	235
93.	Վանանդ	1239	37	86	210	459	447
94.	Արտամետ	281	8	19	47	107	100
95.	Տալիորիկ	333	9	23	56	127	118
96.	Արևադաշտ	496	14	34	84	188	176
97.	Հուշակերտ	1003	30	70	170	370	363
98.	<b>Ֆերիկ</b>	499	15	37	72	187	188
		324183	9630	23624	56197	118787	115945

Ցուցակ  
Արմավիրի մարզի բնակելի տների

Հ/Հ	Քաղաք/ Գյուղ	Շենքերի թիվը			Նշումներ
		ընդհանուր	Բազմաբնակարան շենք	Առանձնատուն	
<b>Արմավիր համայնք</b>					
1.	ք. Արմավիր	6119	139	5980	
2.	գ. Այգեվան	385	-	385	
3.	գ. Արաքս	298	10	288	
4.	գ. Լենուղի	341		341	
5.	գ. Լուկաշին	448	35	413	
6.	գ. Խանջյան	185	127	58	
7.	գ. Հացիկ	282	133	149	
8.	գ. Մայիսյան	165	12	153	
9.	գ. Մյասնիկյան	666	4	662	
10.	գ. Նորավան	247		247	
11.	գ. Սարդարապատ	1183		1183	
<b>Վաղարշապատ համայնք</b>					
1.	ք. Էջմիածին	7566	176	7390	
2.	գ. Ոսկեհատ	664	4	660	
3.	գ. Գեղակերտ	532		532	
4.	գ. Ամբերդ	291		291	
5.	գ. Աղավնատուն	695		695	
6.	գ. Այգեշատ	286		286	
7.	գ. Արագած	503		503	
8.	գ. Արշալույս	808		808	
9.	գ. Դաշտ	222		222	
10.	գ. Դողս	282		282	
11.	գ. Լեռնամերձ	102		102	
12.	գ. Ծաղկունք	284		284	
13.	գ. Ծաղկալանջ	307		307	
14.	գ. Ծիածան	216		216	
15.	գ. Հայթաղ	625		625	
16.	գ. Մոնթեավան	111	10	101	
17.	գ. Հովտամեջ	273		273	
18.	գ. Շահումյան	243		243	
19.	գ. Մրգաստան	210		210	

<b>Մեծամոր համայնք</b>				
1.	ք. Մեծամոր	260	69	191
2.	գ. Ալաշկերտ	339		
3.	գ. Ակնալիճ	225	15	210
4.	գ. Ամասիա	171		171
5.	գ. Այգեշատ	376		376
6.	գ. Արագափ	334		334
7.	գ. Արգավանդ	447		447
8.	գ. Արմավիր	627		627
9.	գ. Արևիկ	535	1	534
10.	գ. Արտաշար	184	1	183
11.	գ. Բամբակաշատ	761		761
12.	գ. Բերքաշատ	95		95
13.	գ. Գետաշեն	482	1	481
14.	գ. Եղեգնուտ	392		392
15.	գ. Երասխահուն	273	2	271
16.	գ. Զարթոնք	323		323
17.	գ. Հայկավան	310	1	309
18.	գ. Մարգարա	77		77
19.	գ. Մրգաշատ	1147		1147
20.	գ. Նալբանդյան	842	5	837
21.	գ. Նոր Արտագես	258		258
22.	գ. Նոր Արմավիր	352		352
23.	գ. Նորապատ	441		441
24.	գ. Նոր Կեսարիա	276		276
25.	գ. Շենավան	349		349
26.	գ. Զանֆիդա	622		622
27.	գ. Զրաշեն	140		140
28.	գ. Վարդանաշեն	188		188
29.	գ. Տանձուտ	365		365
30.	գ. Փշատավան	369		369
31.	գ. Տարոնիկ	456		456
<b>Արաքս համայնք</b>				
1.	գ. Ակնաշեն	368		368
2.	գ. Զրառատ	764		764
3.	գ. Ապագա	385		385
4.	գ. Առատաշեն	471		471
5.	գ. Արաքս	342		342
6.	գ. Արտիմետ	406		406
7.	գ. Գայ	766		766
8.	գ. Գրիբոյեդով	404		404
9.	գ. Լուսազյուղ	178		178

10.	գ. Խորոնք	505		505		
11.	գ. Հայկաշեն	230		230		
12.	գ. Մեծամոր	226		226		
13.	գ. Ջրարբի	344		344		
<b>Փարաքար համայնք</b>						
1.	գ. Փարաքար	956	3	953		
2.	գ. Այգեկ	338	2	336		
3.	գ. Արևաշատ	388		388		
4.	գ. Բաղրամյան	496	4	492		
5.	գ. Մերձավան	506	26	480		
6.	գ. Մուսալեռ	452	13	439		
7.	գ. Նորակերտ	546	4	542		
8.	գ. Պտղունք	468	1	467		
9.	գ. Թախրով	563	8	555		
<b>Բաղրամյան համայնք</b>						
1.	գ. Բաղրամյան	173	4	169		
2.	գ. Արգինա	107		107		
3.	գ. Արտամետ	46		46		
4.	գ. Արևադաշտ	79		79		
5.	գ. Բազարան	147		147		
<b>Ընդամենը 103913</b>							<b>604</b>	<b>30</b>	<b>141584</b>	<b>27/432</b>	<b>24069/ 35392</b>	<b>212</b>	<b>212</b>

- բնակչության տարահանման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների հաշվարկը կատարված է միկրավտորուաների համար, 100կմ վազքի համար վառելիքաքսություն նյութերի միջին ծախս ընդունվել է՝ 17լ բենզին (կամ 25 մ<sup>3</sup> գազ), 0.15լ յուղ, 0.15լ վիսկոզին ավտոշարայուններին ուղեկցող ոստիկանության ավտոմեքենաների հաշվարկը կատարված է թեթև մարդատար ավտոմեքենաների համար, 100 կմ վազքի համար վառելիքաքսության նյութերի միջին ծախս ընդունվել է՝ 10լ բենզին, 0.25լ յուղ, 0.15լ վիսկոզին ավտոշարայուններին ուղեկցող բուժօգնության ավտոմեքենաների հաշվարկը կատարված է միկրավտորուաների համար, 100կմ վազքի վառելիքաքսության նյութերի համար միջին ծախս ընդունվել է՝ 17լ բենզին (կամ 25 մ<sup>3</sup> գազ), 0.15լ յուղ, 0.15լ վիսկոզին

**Հ Ա Շ Կ Ա Ր Կ**  
**ՆԱԽԱՀԱՐԱԿ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՇՏԱՊ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՍՈՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԾՇԿԱԿԱՆ ՀԱԳԱՋԴԻՄԱՆ ՈՒԹԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ**

ՀՀ Ը/Կ	Տարահանվող բնակավայրը		Տարաբնակեցվող բնակավայրը	Տարահանման երթուղին	Ուժեղ և միջոցներ	
	Համայնք	Բնակավայր			Խասարակական կարգի պահպանության (ավտոներ / մարդ)	Բժշկական օգնության (ավտոներ / մարդ)
1	1	2	3	4	5	6
1. Նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներից բնակչության տարահանման երթուղիներ						
1	Մեծամոր	Բ. Մեծամոր	Բ. Հրազդան (Կոտայքի մարզ)	Բ. Մեծամոր-Բ. Էջմիածին- Բ. Աշտարակ- Բ. Եղվարդ-Բ. Հրազդան	5/10	7 / 21
2		Գ. Ավետիս	Գ. Էջմիածին (Վարդաշապատ համայնք)	Գ. Ավետիս- Բ. Էջմիածին	1/2	3 / 9
3	Մեծամոր	Գ. Արտաշատ	Ջրառատ (Արարքս համայնք)	Գ. Արտաշատ- Գ.Եղեգնուտ- Գ.Ջրառատ	2/4	1 / 3
4		Գ. Արևիկ	Գ. Արևավիր (Արմավիր համայնք)	Գ. Արևիկ-Գ.Արմավիր	1/2	2 / 6
5	Մեծամոր	Գ. Եղեգնուտ	Երասխաիուն (Մեծամոր համայնք)	Գ. Եղեգնուտ- Գ.Երասխաիուն	1/2	2 / 6
6		Գ. Ջարթոնք	Տանձուտ (Մեծամոր համայնք)	Գ. Ջարթոնք- Գ.Եղեգնուտ- Գ.Տանձուտ	2/4	2 / 6
7	Մեծամոր	Գ. Մրգաշատ	Սարդարապատ (Արմավիր համայնք) Բանբակաշատ (Մեծամոր համայնք)	Գ. Մրգաշատ- Գ. Հայկական- Գ. Բանբակաշատ- Գ. Հոկտեմբերի	2/4	4 / 12
8		Գ. Տարոնիկ	Բ. Էջմիածին (Վաղարշապատ համայնք)	Գ. Տարոնիկ- Գ. Խոջոնք- Գ. Էջմիածին	2/4	2 / 6
9	Արմավիր	Բ. Արմավիր	Բ. Գյումրի (Շիրակի մարզ)	Բ. Արմավիր-Բ. Գյումրի	Գմացք / 30	Գմացք/ 30
10		Բ. Թալին	Գ. Արմավիր-Գ. Գյումրի	Գ. Արմավիր-Գ. Գյումրի	3/6	2 / 6

11		գ. Նորավանա	Խանջյան (Արմավիր համայնք)	գ. Նորավան- գ. Լուկաշին- գ. Խանջյան	2/4	2/6	
12	Ֆերիկ	գ. Ֆերիկ	Ղոթս (Վարդաշապատ համայնք)	գ. Ֆերիկ- ք. Էջմիածին- ք. Ղոթս	2/4	1/3	
13	Արաքս	գ. Առատաշեն	Փարաքար (Փարաքար համայնք)	գ. Առատաշեն- ք. Էջմիածին- գ. Փարաքար	2/4	2/6	
14		գ. Բորղոտք	Գալ (Արաքս համայնք)	գ. Խորոտք- գ. Ալեքաշեն- գ. Գալ	2/4	2/0	
15		գ. Աղավնատուն	Ք. Եղվարդ (Կոտայքի մարզ)	գ. Աղավնատուն-ք. Աշտարակ-ք. Եղվարդ	3/6	3/9	
16		գ. Արագած	Օշական (Արագածոտնի մ.)	գ. Արագած- գ. Աղավնատուն- գ. Ոսկեվազ- գ. Օշական	4/8	2/6	
17		գ. Արշարույս	Ոսկեվազ (Արագածոտնի մարզ)	գ. Արշարույս-ք. Էջմիածին- գ. Ոսկեվազ	3/6	4/12	
18		գ. Ծարկակաշեն	Ամբերդ (Վարդաշապատ համայնք)	գ. Ծարկակաշեն- գ. Աղավնատուն- գ. Ամբերդ	2/4	1/3	
19	Վարդաշապատ	գ. Ծիածան	Մրգաստան (Վարդաշապատ համայնք)	գ. Ծիածան- գ. Ծարկակաշեն- ք. Էջմիածին- գ. Մրգաստան	2/4	1/3	
20		գ. Հովտամեջ	Ոսկեհատ (Վարդաշապատ համայնք)	գ. Հովտամեջ- գ. Աղավնատուն- գ. Ոսկեհատ	2/4	1/3	
21		գ. Հայթաղ	Ք. Աշտարակ (Արագածոտնի մ.)	գ. Հայթաղ- գ. Աղավնատուն- գ. Ոսկեվազ- գ. Օշական- ք. Աշտարակ	3/6	2/6	
22		գ. Գեղակերտ	Շահումյան Ղաշտ (Վարդաշապատ համայնք)	գ. Ամարաղար- գ. Ծարկակաշեն- ք. Էջմիածին- գ. Շահումյան- գ. Ղաշտ	2/4	4/12	
Ընդամենը							
2	Տարածքային կետեր, բուժկետեր (ընդամենը)						
2	Տարածքային կետեր, բուժկետեր (ընդամենը)						
3	Տարածքային կետեր, բուժկետեր (ընդամենը)						
3	Տարածքային կետեր, բուժկետեր (ընդամենը)						
4	Տարածքային կետեր, բուժկետեր (ընդամենը)						
4	Տարածքային կետեր, բուժկետեր (ընդամենը)						
5	Տարածքային կետեր, բուժկետեր (ընդամենը)						
5	Տարածքային կետեր, բուժկետեր (ընդամենը)						
6	Տարածքային կետեր, բուժկետեր (ընդամենը)						
6	Տարածքային կետեր, բուժկետեր (ընդամենը)						
7	Տարածքային կետեր, բուժկետեր (ընդամենը)						
7	Տարածքային կետեր, բուժկետեր (ընդամենը)						
			48/126 գնացք/ 30	50/ 150 գնացք/ 30			
			0/117	33/99			
			0/240	-			
			30/156	-			
			33/132	-			
			45/118	-			
			25/50	-			

8	Տարահանման բնակավայրերում տարահանված բնակչության գրանցման կազմակերպման վերականգնիչ (ընդամենը)	0/100	-
9	Տարահանումից հետո կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանման վերականգնիչ (ընդամենը)	19/38	-
10	Պահեստային խմբեր (ընդամենը)	30/300	-
Ընդամենը		182 / 1077 գնացք/ 30	83 / 249 գնացք/ 30

**Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ո Ղ Ծ Ա Ծ Կ Ա Գ Ր Ե Ր**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ  
ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՎԹԱՐԻ ՄԱՍԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ**

ՀՀ ը/կ	Իրավիճակի նկարագիրը	Իրավիճակի դասը	Ծածկագ իրը (կողը)
1.	Տեղի է ունեցել ՀԱԷԿ-ի արտանախագծային վթար	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԹԱՐ	Ատոմ-1
2.	Իրական է ՀԱԷԿ-ի արտանախագծային վթարի սպառնալիքը (պատճառը՝ տեխնոլոգիական խափանում կամ անձնակազմի սխալ գործողություն)		Ատոմ-2
3.	Իրական է ՀԱԷԿ-ի արտանախագծային վթարի սպառնալիքը (պատճառը՝ արտաքին ազդեցություն կամ ղեկավարման վահանակի անձնակազմի գործելու անհնարինություն)		Ատոմ-3
4.	Տեղի է ունեցել ՀԱԷԿ-ի նախագծային վթար	ՏԵՂԱԿԱՆ ՎԹԱՐ	Ատոմ-4
5.	Իրական է ՀԱԷԿ-ի նախագծային վթարի սպառնալիքը (պատճառը՝ տեխնոլոգիական խափանում կամ անձնակազմի սխալ գործողություն)		Ատոմ-5
6.	Իրական է ՀԱԷԿ-ի նախագծային վթարի սպառնալիքը (պատճառը՝ արտաքին ազդեցություն կամ ղեկավարման վահանակի անձնակազմի գործելու անհնարինություն)		Ատոմ-6
7.	ՀԱԷԿ-ի տեխնոլոգիական պարամետրերը դուս են եկել անվտանգ շահագործման սահմաններից	ՏԱԳՆԱՊ	Ատոմ-7
8.	ՀԱԷԿ-ում տեղի է ունեցել տեխնոլոգիական գործընթացին սպառնող ոչ տեխնոլոգիական միջադեպ (հրդեհ, պայթյուն և այլն) կամ առկա է ՀԱԷԿ-ի վրա վտանգավոր արտաքին ազդեցության սպառնալիք	ՏԱԳՆԱՊ	Ատոմ-8

Պ Լ Ա Ն

**ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱԶԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի (այսուհետ՝ Մարզի) գործողությունների պլանով (այսուհետ՝ Պլան) սահմանվում են Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում Մարզի բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և փրկարար ուժերի խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը:

**2. Պլանում ներգրավված են՝**

- 1) ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմը.
- 2) ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) Արմավիրի մարզային փրկարարական վարչությունն (այսուհետ՝ ՄՓՎ) իր ստորաբաժանումներով.
- 3) Մարզի տեղական ինքնակառավարման մարմինները.
- 4) ՀՀ պետական կառավարման մարմինների տարածքային /մարզային/ ստորաբաժանումները՝
  - ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ ՊՆ) զինվորական կայազորը,
  - ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) Արմավիրի մարզային վարչությունը,
  - ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության (այսուհետ՝ ՔՈԳՎ) Արմավիրի մարզային վարչությունը,
  - ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության (այսուհետ՝ ՀՈԳՎ) Արմավիրի, վաղարշապատի և Բաղրամյանի բաժինը,
  - «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ ցանցերի պլանավորման և կառուցման վարչության Երևանի և հարակից մարզերի շահագործման բաժնի Արմավիրի թիմը,
  - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմավիրի ԳԳՄ մարզային վարչությունը,
  - «Հայկական էլեկտրական ցանցեր» (այսուհետ՝ ՀԷՑ) ՓԲԸ «Մուսալեռ» մասնաճյուղի Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի էլ. ցանցերը,
  - «Վեոլիա Ջուր» ՓԲԸ «Հարավ շահագործման տնօրինություն», «Արմավիր», «Էջմիածին» և «Բաղրամյան» շահագործման տեղամասը,
  - ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Էջմիածնի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Հիսուսի Մանուկներ» առողջության կենտրոն ՓԲԸ, ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Արմավիրի մասնաճյուղը:

3. ՀՀ-ն տարածքում ուժեղ երկրաշարժի կամ դրա նախապատրաստման նպատակով, Մարզի բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ, ՀՀ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներն են՝

- 1) ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գործառույթներն են՝

ա) ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների ու տարահանման պլանների ճշգրտումը և պլաններով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ) Մարզային պլաններով և ծրագրերով նախատեսված բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը,

գ) տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ներգրավումը բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման գործում,

դ) Մարզի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը,

ե) կառավարման, կապի և ազդարարման համակարգերի նախապատրաստման ու գործունեության աշխատանքների կազմակերպումը,

զ) լիազոր մարմնի և ՀՀ պաշտպանության նախարարության մարզային ստորաբաժանումների հետ համատեղ մայրուղիների և ճանապարհների օգտագործման կարգի ճշտումը,

է) տարահանման և ընդունման հանձնաժողովների գործունեության նախապատրաստումը,

ը) բնակչության պաշտպանության միջոցառումների համար նախատեսված տրանսպորտային միջոցների նախապատրաստումը,

թ) բնակչության պաշտպանության հետախուզական, ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների նախապատրաստումը,

ժ) բնակչության զանգվածային պատվաստման նախապատրաստումը՝ համաճարակաբանական մարմինների ցուցումներին համապատասխան,

ժա) հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների պահպանության ուժեղացման նախապատրաստումը,

ժբ) կազմակերպություններում հակահրդեհային միջոցառումների նախապատրաստումը,

ժգ) գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պահպանության միջոցառումների ժամանակացույցների ճշգրտումը,

ժդ) արտակարգ իրավիճակների (այսուհետ՝ ԱԻ) պայմաններում Մարզի բնակչության վարվելակերպի, բնակչության կողմից անհատական պաշտպանության պարզագույն միջոցների պատրաստման ուսուցման կազմակերպումը,

ժե) տուժած բնակչության՝ ժամանակավոր կացարաններով ապահովումը,

ժզ) բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

## **2) Արմավիրի մարզային փրկարարական վարչության գործառույթներն են՝**

ա. Իր իրավասության շրջանում ՀՀ Արմավիրի մարզպետին Պլանն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը,

բ) Պլանով նախատեսված միջոցառումների իրականացման կազմակերպումը,

գ) փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և իրականացումը,

դ) իր ենթակայության ստորաբաժանումների կայուն գործունեության կազմակերպումը,

ե) բնակչության և կառավարման մարմինների ազդարարումը և իրազեկումը,

զ) կառավարման, կապի և ազդարարման համակարգերի նախապատրաստման և գործունեության աշխատանքների կազմակերպումը,

է) երկրաշարժից տուժած տարածքի հետախուզության կազմակերպումը և համակարգումը,

ը) Պլանում ներգրավված մարմինների հետ համագործակցության իրականացումը՝ բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման և կատարման համար,

թ) բնակչության պաշտպանության հարցերով պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգումը,

ժ) երկրաշարժի հետևանքով տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և այլ նյութական պաշարների, ֆոնդերի նախապես ստեղծման համար առաջարկությունների մշակումը և դրանք ՀՀ Արևավիրի մարզպետին ներկայացնելը,

ժա) օդի որակի դիտակետերի շուրջօրյա աշխատանքի ապահովման կազմակերպումը,

ժբ) հակահրդեհային անվտանգության ապահովումը,

ժգ) բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

**3) Տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկվող գործառույթներն են՝**

ա) ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ) միջոցառումների իրականացումը՝ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով,

գ) համայնքի բնակչության, գյուղատնտեսական կենդանիների, նյութական և մշակութային արժեքների, գյուղատնտեսական կենդանիների ու ավրանքների տարահանման, բնակչությանը՝ ժամանակավոր կացարաններով և առաջին անհրաժեշտության միջոցներով ապահովումը,

դ) համայնքի բնակչության ազդարարումը,

ե) համայնքի ուժերի՝ փրկարարական աշխատանքներին մասնակցության ապահովումը,

զ) մահացածների հուղարկավորության իրականացումը,

է) բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

**4) Ըստ նշանակության՝ պետական կառավարման տարածքային մարմինների ստորաբաժանումների /ծառայությունների/ գործառույթներն են՝**

- ՀՀ ՆԳՆ ՀՈԳԿ Արմավիրի, Վաղարշապատի և Բաղրամյանի բաժինների գործառույթներն են՝

ա) ԱԻ-ում համայնքներում, պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, ինչպես նաև բնակչության պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններում, պահպանվող օբյեկտներում, բնակչության տարահանման հավաքակայաններում և տեղաբաշխման վայրերում, փրկարարական ուժերի և միջոցների շարժման երթուղիներում հասարակական կարգի պահպանության կազմակերպումն ու ապահովումը,

բ) պետական սեփականության, բնակչության ունեցվածքի պահպանության կազմակերպումը և իրականացումը,

գ) մասնակցությունը բնակչության ազդարարմանը և իրազեկմանը,

դ) աղետի գոտում անցագրային ռեժիմի և պարետային ծառայության կազմակերպումն ու իրականացումը,

ե) ՀՀ ռազմավարական նշանակություն ունեցող և կենսաապահովման կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացումը,

զ) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը,

է) աղետի հետևանքների վերացման գործում ներգրավված ուժերի և տարահանման անխափան երթևեկության ապահովումը,

ը) մասնակցությունը փրկարարական աշխատանքներին,

թ) մահացածների հաշվառմանն աջակցությունը:

- ՀՀ ՊՆ Շիրակի զինվորական կայազորի գործառույթներն են՝

ա) ճանապարհների վնասված և փլուզվածքներով խցանված հատվածներով ու կամուրջներով անցանելիության ապահովումը,

բ) փրկարարական աշխատանքների իրականացման համար ուժերի ու միջոցների տրամադրումը և փրկարարական աշխատանքներին մասնակցությունը

գ) մասնակցություն ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանը,

դ) մասնակցություն աղետի հետևանքների վերացման գործում ներգրավված ուժերի և տարահանման անխափան երթևեկության ապահովմանը,

ե) մասնակցություն աղետի գոտում անցագրային ռեժիմի և պարետային ծառայության կազմակերպմանը,

զ) մասնակցություն տուժած բնակչության կենսաապահովման միջոցների, հումանիտար օգնության միջոցների բաշխման կետեր տեղափոխման անվտանգության ապահովմանը.

- «Հ Ա Ա Ծ Արմավիրի մարզային վարչության գործառույթներն են՝

ա) պահպանվող օբյեկտների պահպանումը,

բ) ժամանած միջազգային ուժերի նկատմամբ հսկողության իրականացումը:

- «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ ցանցերի պլանավորման և կառուցման վարչության Երևանի և հարակից մարզերի շահագործման բաժնի Արմավիրի թիմի գործառույթներն են՝ պետական կառավարման մարմինների և բնակչության ազդարարումը, կառավարման մարմինների՝ կապով ապահովումը.

- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմավիրի ԳԳՄ մարզային վարչության գործառույթներն են՝

ա) տուժած տարածքների գազամատակարարման վերականգնումը, աշխատանքային տեղամասերում, առանձին հատվածներում դրանց դադարեցումը կամ վերաթողարկումը,

բ) մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման գործին.

- «ՀԷՏ» ՓԲԸ «Մուսալեռ» մասնաճյուղի Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի էլ. ցանցեր էներգոմատակարարման կազմակերպությունների գործառույթներն են՝

ա) տուժած տարածքների էներգոմատակարարման վերականգնումը, աշխատանքային տեղամասերում, առանձին հատվածներում դրանց դադարեցումը կամ վերաթողարկումը,

բ) մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման գործին:

- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ «Հարավ շահագործման տնօրինության», գործառույթներն են՝

ա) ջրային ռեսուրսների և համակարգերի պաշտպանական միջոցառումների իրականացման ապահովումը.

բ) պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնակչության և կազմավորումների անձնակազմի՝ ջրով ապահովումը.

-Մարզի առողջապահության կազմակերպությունների գործառույթներն են՝

ա) տուժած բնակչությանը և հիվանդներին ժամանակին անհրաժեշտ բժշկական օգնության ցուցաբերումը, նրանց տարահանումը բժշկական հաստատություններ և հետագա բուժման կազմակերպումը.

բ) ընդհանուր և մասնագիտացված բժշկական հաստատությունների ցանցի պատրաստության բերումն ու համալրումն անհրաժեշտ բժշկասանիտարական գույքով և դեղորայքով.

գ) երկրաշարժից տուժած տարածքներում սանիտարահամաճարակաբանական միջոցառումների իրականացումը.

դ) բնակչության զանգվածային պատվաստման համար նախապատրաստական աշխատանքների իրականացումը.

ե) հակահամաճարակային դիտարկման և լաբորատոր հսկողության կազմակերպումը ջրի նկատմամբ, ինչպես նաև աջակցությունն արտաքին միջավայրի և սննդի նկատմամբ իրականացվող դիտարկմանն ու լաբորատոր հսկողությանը.

զ) կազմավորումների և բուժփմնարկների՝ անհրաժեշտ բժշկական գույքով և դեղորայքով ապահովումը.

է) ԱԻ-ում աշխատելու համար բժիշկների և միջին բուժանձնակազմի վերապատրաստումն ու արագ մասնագիտացումը.

ը) տարահանման բժշկական ապահովումը,

թ) մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման աշխատանքներին,

## II. ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

4. Մարզը գտնվում է Արարատյան հարթավայրի հյուսիս-արևմտյան մասում: Տարածքը՝ 1242 քառակուսի կիլոմետր է:

Մարզը բնութագրվում է բնական վտանգավոր երևույթներով ու գործընթացներով (սելավներ, ջրածածկումներ, ցրտահարություն, ուժեղ քամիներ, երաշտ, հորդառատ անձրևներ, կարկուտներ և այլն): Կլիման չոր, մայրցամաքային է, ամառվա միջին ջերմաստիճանը՝  $+30 - +35^{\circ}\text{C}$ , ձմռանը՝  $-15 - -20^{\circ}\text{C}$  :

Մարզի տարածքը ամբողջությամբ սեյսմավտանգ է, գտնվում է 7-8 բալ ուժգնությամբ սեյսմիկ գոտում:

5. Սեյսմատեկտոնական պայմանները բնութագրվում են ժամանակակից ակտիվ բեկվածքների առկայությամբ: Մարզի տարածքը հատվում է բազմաթիվ սեյսմակտիվ բեկվածքներով, որոնց համադրվում են տարբեր ուժգնության երկրաշարժերի օջախները՝ Գառնիի, Փարաքարի և Սպիտակի օջախները:

### 6. Հնարավոր իրադրության բնութագիրը՝

1) Համաձայն MSK-64 սանդղակի (M 5-7՝ ըստ Ռիխտերի սանդղակի)՝ ուժեղ երկրաշարժի 8-բալանոց գոտում հատուկ նախագծով կառուցված շենքերում վնասվածքները թեթև կլինեն, տիպային կառույցներում՝ նշանակալի, վատ կառույցներում տեղի կունենան ավերածություններ: Կթեքվեն և կընկնեն վառարանային և գործարանային ծխնելույզները, սյուները և հուշարձանները: Հորատանցքերում և ջրհորներում կփոխվեն ջրի մակարդակները: Երկրի մակերեսի վրա կառաջանան ճեղքեր:

2) Երկրաշարժի հետևանքով հնարավոր են բազմաթիվ երկրորդական վտանգավոր երևույթներ՝ փլուզումների, սողանքների, սելավների տեսքով, որոնք իրենց հերթին կստեղծեն լրացուցիչ բազմաթիվ խոցող գործոններ: Կավերվեն և կվնասվեն ճանապարհային շինություններն ու կառույցները, կխցանվեն ավտոմայրուղիները:

3) Հնարավոր իրադրության գնահատումը  
Գառնիի օջախի ակտիվացման դեպքում՝

- 8-բալանոց գոտում կհայտնվեն Մարզի Այգեկ, Արևաշատ, Բաղրամյան /Էջմ/, Մերձավան, Մուսալեռ և Փարաքար բնակավայրերը.

- 7 բալանոց գոտում կհայտնվեն Մարզի 35 բնակավայրեր:

Ուժեղ երկրաշարժի ազդեցության գոտում կհայտնվեն 24010 շենքեր և շինություններ, որոնցում բնակվում է 149785 մարդ, որից բազմաբնակարան շենքերի թիվը՝ 314 շենք, բնակիչների թիվը՝ 35800 մարդ:

8 բալ ինտենսիվության ավերիչ երկրաշարժի գոտում կհայտնվեն 3814 շենքեր և շինություններ, որից բազմաբնակարան՝ 37 շենք:

Բնակիչների ընդհանուր թիվը կազմում է 21319 մարդ, որից բազմաբնակարան շենքերում՝ 2815 մարդ:

7 բալ ինտենսիվության երկրաշարժի գոտում կհայտնվեն Մարզի 35 բնակավայրերի 20239 շենքեր, որոնցում բնակվում են 128772 մարդ, որից 278 բազմաբնակարան շենքերում՝ 32892 մարդ, ինչպես նաև կհայտնվի նաև Էջմիածին քաղաքը, որտեղ բազմաբնակարան

շենքերի և հասարակական կառույցների թիվը կազմում է 176 շենք, որից 7-ը վթարային են և հնարավոր է փլուզվեն: Վթարային շենքերում բնակվում են 798 մարդ:

Բնակչության շրջանում հավանական ընդհանուր կորուստները կկազմեն 2977 մարդ, որոնցից անվերադարձ՝ 1711 մարդ, սանիտարական՝ 1266 մարդ, այդ թվում՝ ծանր վիրավորներ՝ 636 մարդ, միջին ծանրության վիրավորներ՝ 350 մարդ և թեթև վիրավորներ՝ 280 մարդ:

Երկրաշարժի հետևանքով կստեղծվի հետևյալ ինժեներական իրավիճակը՝ վնասված շենքեր՝ 4709 հատ, որոնցից 1-ին կարգի՝ թեթև վնասվածք կստանա 38 շինություն, 2-րդ կարգի՝ միջին վնասվածք կստանա 386 շինություն, 3-րդ կարգ՝ ծանր վնասվածք կստանա 393 շինություն, 4-րդ կարգ՝ մասամբ կքանդվի 1424 շինություն, 5-րդ կարգ՝ լրիվ կփլվի 2468 շինություն: Խոշոր հրդեհներ՝ 2 հատ, խոշոր վթարներ կոմունալ - էներգետիկ ցանցում՝ 14 հատ, փլվածքներով փակված փողոցներ՝ 11,2 կմ, փլատակների մակերեսը կկազմի 715950 մ<sup>2</sup>, իսկ ծավալը՝ 3329500 մ<sup>3</sup>:

Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար կպահանջվեն 2093 ձեռքով աշխատող փրկարարական խմբեր՝ 14651 մարդուց բաղկացած անձնակազմով, 414 մեխանիզացված փրկարարական խմբեր՝ 9522 մարդուց բաղկացած անձնակազմով, 31 սանիտարական խմբեր՝ 186 մարդուց բաղկացած անձնակազմով, 8 հրդեհաշիջման մարտական հաշվարկներ, 11 վթարավերականգնողական խմբեր՝ անձնակազմ 44 մարդ, 19 հասարակական կարգի պահպանման ջոկեր՝ անձնակազմ 57 մարդ:

Անհրաժեշտություն կլինի ընդհանուր թվով 240 միավոր (մղան, էքսկավատոր, ավտոկոունկ) ինժեներական տեխնիկայի, 240 միավոր ինքնաթափերի, 30 միավոր կոմպրեսորային կայանների, 40 միավոր էլեկտրակայանների, 40 միավոր եռակցման սարքերի:

Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ կլինեն ընդամենը՝ 294 կազմավորում՝ 1735 մարդուց բաղկացած անձնակազմով, 220 ինժեներական և հատուկ տեխնիկա:

Հնարավոր իրադրության գնահատումը Սպիտակի օջախի ակտիվացման դեպքում՝ Մարզի բոլոր բնակավայրերը հայտնվում են 7 բալ ինտենսիվության երկրաշարժի գոտում:

**7.5 բալ ինտենսիվության երկրաշարժի գոտում հայտնվում է միայն Լեռնամերձ բնակավայրը, որտեղ բոլոր շինությունները 1-2 հարկանի առանձնատներ են:**

Սպիտակի երկրաշարժի գոտում հայտնված Մարզի բոլոր համայնքների վնասված շինությունների ընդհանուր թիվը կկազմի 68653 շենք, որոնցից 1-ին կարգի՝ թեթև վնասվածք կստանա 8925 շինություն, 2-րդ կարգի՝ միջին վնասվածք կստանա 25401 շինություն, 3-րդ կարգ՝ ծանր վնասվածք կստանա 23342 շինություն, 4-րդ կարգ՝ մասամբ կքանդվի 8926 շինություն, 5-րդ կարգ՝ լրիվ կփլվի 2059 շինություն: Խոշոր հրդեհների թիվը կկազմի՝ 271 հատ, խոշոր վթարներ կոմունալ - էներգետիկ ցանցում՝ 152 հատ, փլատակների մակերեսը կկազմի 1326700 մ<sup>2</sup>, իսկ ծավալը՝ 5555100 մ<sup>3</sup>:

Բնակչության շրջանում հավանական ընդհանուր կորուստները կկազմեն 52039 մարդ, որոնցից անվերադարձ՝ 17968 մարդ, սանիտարական՝ 30471 մարդ, այդ թվում՝ ծանր վիրավորներ՝ 15235 մարդ, միջին ծանրության վիրավորներ՝ 8228 մարդ և թեթև վիրավորներ՝ 7008 մարդ:

Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար կպահանջվեն 8032 ձեռքով աշխատող փրկարարական խմբեր՝ 56224 մարդուց բաղկացած անձնակազմով, 5300 մեխանիզացված փրկարարական խմբեր՝ 121900 մարդուց բաղկացած անձնակազմով, 2362 սանիտարական խմբեր՝ 7086 մարդուց բաղկացած անձնակազմով, 135 հրդեհաշիջման մարտական հաշվարկներ, 152 վթարավերականգնողական խմբեր՝ անձնակազմ 456 մարդ, 308 հասարակական կարգի պահպանման ջոկեր՝ անձնակազմ 924 մարդ:

Անհրաժեշտություն կլինի ընդհանուր թվով 768 միավոր (մղան, էքսկավատոր, ավտոկռունկ) ինժեներական տեխնիկայի, 501 միավոր ինքնաթափերի, 230 միավոր կոմպրեսորային կայաններ, 288 միավոր էլեկտրակայանների, 115 միավոր եռակցման սարքերի:

Փարաքարի օջախի ակտիվացման դեպքում՝ Մարզի Փարաքար, Վաղարշապատ, Արաքս համայնքի բնակավայրերը հայտնվում են 6 բալ ինտենսիվության երկրաշարժի գոտում, 5 բալ ինտենսիվության երկրաշարժի գոտում կհայտնվեն Մարզի մնացած բնակավայրերը:

4) Եզրակացություններ ստեղծված իրավիճակի գնահատումից:

ա. Մարզը ունի հնարավորություններ տուժած բնակչության տեղաբաշխման ուղղությամբ: Մարզը կարող է ընդունել Երևան քաղաքի Շենգավիթ համայնքից նախատեսված թվով տուժած բնակչությանը, նրանց տեղաբաշխումը կիրականացվի ինչպես Էջմիածին քաղաքում, այնպես էլ Արմավիր քաղաքում և Արմավիր ու Բաղրամյան համայնքների բնակավայրերում:

բ. Մարզը կարող է իր փրկարարական և վթարավերականգնողական ուժերի միջոցով կազմակերպել Մարզի բնակչության պաշտպանությունը, ինչպես նաև օգնել Երևան քաղաքին՝ փրկարարական աշխատանքներում ձեռքով աշխատող փրկարար խմբերով և որոշակի քանակի ինքնաթափ մեքենաներ տրամադրելով:

գ. Մարզը տուժած բնակչության կենսաապահովման խնդիրներից կարող է ապահովել հացամթերքի, բանջարեղենի, պահածոների, մսի, թռչնամսի, մասամբ ձկնեղենի պահանջները:

### III. ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

#### 7. Կառավարման կազմակերպումը՝

1) ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումները նախապես՝ մինչև Մարզի ԱԻ Մարզային հանձնաժողովի նիստի գումարումը, կազմակերպում է ՄՓՎ-ն՝ իր ստորաբաժանումների ուժերով, ընդգրկելով Շիրակի զինվորական կայազորի, բժշկական հիմնարկների, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Մարզային ստորաբաժանումների, համայնքների ուժերը և միջոցները:

ՀՀ Մարզի ԱԻ հանձնաժողովի անաշխատունակության դեպքում կառավարումն իրականացվում է ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողովի (կամ Շիրակի մարզային ԱԻ հանձնաժողովի) կողմից:

2) ՄՓՎ պետը, ստանալով ուժեղ երկրաշարժի մասին հաղորդագրությունը, աղետի գոտում ծավալում է աղետի հետևանքների վերացման կառավարման կենտրոնը, փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարների կառավարման կետերը, կապ է հաստատում նրանց և ՀՀ ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնի (այսուհետ՝ ՕԿԿ), Շիրակի զինվորական կայազորի և ՀՀ ՆԳՆ ոստիկանության Մարզային օպերատիվ հերթապահների միջև: Նշված կառավարման կետերից իրականացվում է փրկարարական աշխատանքների անմիջական կառավարումը:

3) փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարները նշանակվում են ՄՓՎ անձնակազմից, ովքեր ենթարկվում են ՄՓՎ պետին, իսկ Մարզի ԱԻ հանձնաժողովի աշխատանքներն սկսվելու պահից՝ հանձնաժողովին:

4) ՄՓՎ ՃԿԿ-ից ուժեղ երկրաշարժի մասին ազդարարվելուց հետո, ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալները ժամանում են ՄՓՎ կողմից ծավալված աղետի հետևանքների վերացման կառավարման կենտրոն և սկսում են աշխատանքը: Գործում է Մարզային ԱԻ հանձնաժողովը, որի նախագահն է Արմավիրի մարզպետը, տեղակալները՝ ՄՓՎ պետը,

մարզպետի տեղակալը, անդամները՝ մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը և ծառայությունների ղեկավարներ:

5) Մարզային ԱԻ հանձնաժողովը ղեկավարում է բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ամբողջ գործընթացը:

6) Մարզային ԱԻ հանձնաժողովը կառավարումն իրականացնում է ստեղծված կառավարման կենտրոններից (կետերից), իսկ անհրաժեշտության դեպքում՝ պահեստային կամ շարժական կենտրոններից (կետերից):

#### **8. Ազդարարման կազմակերպումը՝**

1) Մարզի տարածքում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժի մասին հաղորդագրությունը լիազոր մարմնի «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության» և (կամ) ՀՀ ՆԳՆ 112 ՕԿԿ-ից փոխանցվում է ՄՓՎ և Մարզի ԱԻ հանձնաժողովին:

2) ՄՓՎ պետը կազմակերպում է ենթակա անձնակազմի ազդարարումը և հավաքը, ստեղծում օպերատիվ խմբեր և կազմակերպում դրանց աշխատանքը:

3) Ազդարարման համակարգի խափանման դեպքում Մարզի ղեկավար կազմի ազդարարումն իրականացվում է սուրհանդակների, իսկ տուժած բնակչության իրազեկումը և վարվելակերպի մասին կանոնները՝ ՀՀ ՆԳՆ ՀՈԳՎ և պարեկային ծառայության շարժական ուժերով ու միջոցներով:

5) պլանում ներգրավված մարմինների անձնակազմերից յուրաքանչյուրը, զգալով երկրաշարժին բնորոշ ցնցումներ կամ տեսնելով համատարած փլուզումներ, հնարավորության դեպքում ներկայանում է իր աշխատավայր՝ առանց ազդարարվելու:

#### **9. Կապի կազմակերպումը՝**

1) ՀՀ վարչապետի և ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողովի կառավարման կենտրոնից քաղաքային ու միջքաղաքային հեռախոսակապի միջոցով կապ է կազմակերպվում ՀՀ Արմավիրի մարզպետի հետ: Կարճալիք N 1 ռադիոցանցի միջոցով կապ է կազմակերպվում ՀՀ վարչապետի կառավարման կետի և ՀՀ մարզպետների, ՀՀ ներքին գործերի նախարարի շարժական կառավարման կետերի հետ:

2) ՀՀ ՆԳՆ ՕԿԿ-ի և Արմավիրի ՄՓՎ միջև կապը կազմակերպվում է կարճալիք N2 ռադիոցանցով:

3) կարճալիք N 3 և գերկարճալիք N 3 ռադիոցանցերով Մարզի մշտական գործող հանձնաժողովների, ՄՓՎ, Մարզի փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարների և հասարակական փրկարարական ուժերի միջև կապ է կազմակերպում:

4) Գերկարճալիք N 4 ռադիոցանցերով կապը կազմակերպվում է Մարզի մշտական գործող ԱԻ հանձնաժողովի, Մարզի տարահանման հանձնաժողովի, համայնքային ԱԻ հանձնաժողովների միջև: Մարզային կառավարման կետերի միջև կապը կազմակերպվում է նաև քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի միջոցով:

#### **10. Երկրաշարժի գոյում հետախուզության կազմակերպումը՝**

1) հետախուզության կազմակերպումը ՀՀ բնակչության պաշտպանության համակարգում ընդգրկված մարմինների ղեկավարների կարևորագույն պարտականությունն է:

2) հետախուզության անմիջական կազմակերպիչներն են Արմավիրի ՄՓՎ պետը և մարզպետը:

3) Արմավիրի մարզպետը կազմակերպում է հատուկ հետախուզություն՝ ելնելով բնակչության պաշտպանության համակարգի ընդհանուր խնդիրներից, ինչպես նաև՝ իրենց շահերից:

4) հետախուզության նպատակը, հիմնական ուղղությունները, ներգրավվող ուժերն ու միջոցները որոշում է ՄՓՎ-ն:

5) Մարզի ամբողջ տարածքում հետախուզության ընդհանուր համակարգումն իրականացնում է ՄՓՎ-ն,

6) հատուկ հետախուզության անմիջական ղեկավարումն իրականացնում է ՀՀ Արմավիրի մարզպետը:

7) Մարզի տարածքում հետախուզությունը ղեկավարվում Արմավիրի ՄՓՎ-ից.

8) հետախուզություն իրականացնող բոլոր ուժերի փոխգործողությունները կազմակերպվում են՝ ըստ խնդիրների, ուղղությունների, օբյեկտների, ժամանակի և գործողությունների տեսակների: Հետախուզական ուժերի համագործակցությունը իրականացվում է համաձայն նախապես մշակված փոխգործողությունների պլանի.

9) իրադրության վերաբերյալ ձեռք բերված տվյալները վերլուծվում և զեկուցվում են համապատասխան ղեկավարներին՝ համաձայն կառավարման սխեմայի.

10) հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով, ինչպես նաև նախապես մշակված զեկուցների հաշվետախտակի համաձայն.

11) հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անմիջապես.

12) հետախուզական ուժերը պատրաստականության են բերվում ժ +1.30 ր

13) Մարզի հետախուզական ուժերի կազմի մեջ մտնում են՝

ա. ՄՓՎ հրշեջ փրկարարական ջոկատների հետախուզական խմբերը,

բ. Մարզի հատուկ հետախուզական ուժերը, թվով 18 խումբ և օղակ, 70 մարդ անձնակազմով.

գ. հիդրոօդերևութաբանական կայանը:

#### IV. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆ ԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

11. Փրկարարական և այլ անհեղափոխ վթարավերականգնողական աշխատանքների անցկացման վերաբերյալ որոշման ընդունման, ուժերի նախապատրաստման և կիրառման կարգը հետևյալն է՝

1) երկրաշարժի գոտու հետախուզական տվյալները հավաքվում և վերլուծվում են Արմավիրի ՄՓՎ աշխատանքային խմբում՝ Մարզի ԱԻ հանձնաժողովի մասնակցությամբ.

2) վերլուծության արդյունքում որոշվում են՝

ա. երկրաշարժի հետևանքների ծավալները,

բ. փրկարարական աշխատանքների բնույթը, ծավալը և անցկացման հաջորդականությունը,

գ. ուժեղ ներգործող թունավոր նյութեր օգտագործող կազմակերպությունների (օբյեկտների) վթարի բնույթը, ծավալները, ինչպես նաև թունավոր նյութերի հնարավոր ազդեցությունը փրկարարական ուժերի գործողությունների վրա,

դ. Մարզի փրկարարական ուժերի կազմը, վիճակն ու փրկարարական աշխատանքների կատարման հնարավորությունը և այդ նպատակով Մարզի վթարավերականգնողական ուժերի ու բնակչության ներգրավման անհրաժեշտությունը,

ե. միջազգային օգնության կարգով հատկացվող ուժերի ու միջոցների օգտագործման անհրաժեշտությունը, քանակը և ներգրավման վայրը,

զ. տեղանքի բնույթը, ճանապարհների վիճակը, տարվա օրվա ժամանակն ու եղանակը և այդ գործոնների ազդեցությունն ուժերի գործողությունների վրա,

է. աղետի գոտի ուժերի մուտքի առավել նպատակահարմար ուղղությունները,

ը. աշխատանքների կատարման եղանակները և անվտանգությունն ապահովող միջոցները.

3) ելնելով իրադրության գնահատման եզրակացություններից, երկրաշարժի հետևանքների վերացման Մարզային հանձնաժողովի նախագահն ընդունում է որոշում՝

աղետի գոտում որոնողափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման վերաբերյալ, ըստ որի աղետի գոտու համար նշվում են՝

- ա. երկրաշարժի տարածքը և հետևանքները,
- բ. փրկարարական աշխատանքների իրականացման համար ներգրավվող ուժերն ու միջոցները և նրանց խնդիրները,
- գ. աշխատանքների կատարման անվտանգության միջոցառումները,
- դ. աղետի գոտու տուժածների և բնակչության տարահանման երթուղիները,
- ե. ներգրավված ուժերի համագործակցության կարգը և գործողություններն ապահովող միջոցառումները,
- զ. պահեստային ուժերի և միջոցների կազմն ու տեղաբաշխումը,
- է. փրկարարական աշխատանքների համակողմանի ապահովման կարգը,
- ը. կառավարման կազմակերպման կարգը.

4) երկրաշարժի հետևանքների վերացման Մարզային հանձնաժողովի նախագահը փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով, փրկարարական ուժերի ղեկավարներին տալիս է առաջադրանքներ՝ անձամբ կամ ՄՓՎ-ի միջոցով, բոլոր դեպքերում ՄՓՎ-ն այդ առաջադրանքները ձևակերպում է որպես հրաման կամ կարգադրություն:

#### **V. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱԾԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆ ԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

12. Մարզային փրկարարական, վթարավերականգնողական, հասարակական փրկարարական խմբերի և բնակչության բազայի հիման վրա կազմվում է ուժերի խմբավորում, որը նախատեսված է փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելու համար: Աղետի գոտում փրկարարական աշխատանքներ իրականացնող ուժերն ու միջոցները կազմված են՝

1) առաջին էշելոնից, որը նախատեսված է իրավիճակը բացահայտելու, գնահատելու, փրկարարական աշխատանքներ սկսելու և հետագայում ժամանող ուժերի ներգրավումն ապահովելու համար: Ընդգրկում են՝

ա. Արմավիրի ՄՓՎ ստորաբաժանումների 2/3-ը՝ 3 հրշեջ փրկարարական ջոկատների 2-ական խմբեր, (մնացած ուժերը մնում են հիմնական տեղակայման վայրերում՝ ամենօրյա խնդիրների լուծման համար),

բ. ՀՀ ՊՆ էջմիածնի տարածաշրջանի զորամասերի ուժերը և ՀՀ ՆԳՆ ՀՈԳՎ Արմավիրի և Վաղարշապատի բաժինների հասարակական կարգի պահպանման ուժերն ու միջոցները.

գ. աղետի գոտու համայնքների հասարակական կարգի պահպանման կազմավորումները:

2) երկրորդ էշելոնից, որը նախատեսված է փրկարարական աշխատանքների ծավալը կտրուկ ընդլայնելու համար:

ա. ընդգրկում են Մարզի մշտական պատրաստականության ուժերը կապի, կոմունալ-էներգետիկ համակարգի կազմակերպությունների վթարավերականգնողական խմբերը.

բ. Մարզի համայնքների փրկարարական կազմավորումները.

3) երրորդ էշելոնից կամ պահուստից, որը նախատեսված է անսպասելի ծագող խնդիրների լուծման համար:

Ընդգրկում են երկրորդ էշելոնում չընդգրկված Մարզային և համայնքային ուժերը, հասարակական փրկարարական խմբերը և ներգրավված բնակչությանը:

13. Աշխատանքային տեղամասերի ղեկավարները մինչև փրկարարական աշխատանքների սկիզբը, կազմակերպում են տվյալ աշխատանքային տեղամասում գործող ուժերի համագործակցությունը՝

1) որոշում են աշխատանքների կատարման կարգը և հաջորդականությունը՝ ըստ կատարման ժամանակի.

2) որոշում են ինժեներական տեխնիկայի օգտագործման կարգը՝ աշխատատար աշխատանքներն իրականացնելու ընթացքում.

3) համաձայնեցնում են ըստ կատարման տեղի և ժամանակի ներգրավված ուժերի գործողությունները.

4) որոշում են կառավարման և կապի կազմակերպման կարգը ստորաբաժանումների և կազմավորումների հրամանատարների միջև.

5) հայտ են ներկայացնում ԱԻ հանրապետական հանձնաժողով՝ լրացուցիչ ուժեր հատկացնելու համար: Փրկարարական աշխատանքների կատարման ընթացքում ճշտում և անընդհատ զբաղվում են համագործակցության հարցերով.

6) տեխնիկայի մուտքը երկրաշարժի գոտի նախատեսվում է՝

ա. առաջինը՝ թրթուրավոր տեխնիկայի մուտքը,

բ. այնուհետև՝ անվավոր մեքենաների մուտքը.

7) դեպի աշխատանքային տեղամասեր փրկարարական ուժերի մուտքն ապահովելու համար նախատեսվում են փրկարարական ուժերի առաջարկումը (մուտքն աղետի գոտի) ապահովող խումբ և սանիտարական դրուժինաներ.

8) որպես առանձին միջոցառում՝ փրկարարական ուժերի մուտքի ապահովումը հակահրդեհային ապահովումն է, որն իրականացվում է Արմավիրի ՄՓՎ հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների ուժերով և ներառում է հրդեհների տեղայնացումն ու մարումը, ապահովվում են վառվող, ծխապատ և գազացված շինություններից մարդկանց փրկումը և տեղափոխումն անվտանգ վայրեր.

9) փրկարարական ուժերի՝ երկրաշարժի գոտում փրկարարական աշխատանքների տեղամասեր ժամանումից հետո, աշխատանքների տեղամասերի ղեկավարները միջոցներ են ձեռնարկում փլուզված և այրվող շենքերից ու շինություններից մարդկանց փրկելու, առաջին օգնություն ցուցաբերելու և դաշտային կամ ստացիոնար բուժօգնություն տեղափոխելու համար.

10) տուժածներին հայտնաբերելու նպատակով՝ փրկարարական կազմավորումների ղեկավարներն աշխատանքային տեղամասեր են ուղարկում որոնման խմբեր, որոնք մանրակրկիտ զննում են փլուզված շենքերը և կառույցները: Տուժածների տեղերը հայտնաբերելու գործընթացում անհրաժեշտ է օգտագործել տեղի բնակչության կողմից ստացված տեղեկատվությունը և բնակչության ուժերն օգտագործել տուժածներին փլատակների տակից դուրս բերելու համար, քանի որ այդ ժամանակ մեծանում է ձեռքի աշխատանքների ծավալը:

14. Ինժեներական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, փրկարարական ուժերի և միջոցների առաջանցման հիմնական և շրջանցիկ ուղիների ապահովմանը, երկրաշարժի հետևանքով ավերված տարածքներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը:

Ինժեներական ապահովման պատասխանատուն է Արմավիրի մարզպետի աշխատակազմի ոլորտը համակարգող վարչությունը վարչությունը:

Մարզի երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքների ինժեներական ապահովման խնդիրներն են՝

1) ինժեներական հետախուզության կազմակերպումը, արդյունքների վերլուծումը և գնահատումը, անհրաժեշտ փրկարարական ու վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

2) փողոցների, ճանապարհների անցանելիության ապահովման միջոցառումների իրականացումը.

3) բնակչությանը տեղափոխելու, տարահանման ուղիների անցանելիության ապահովումը.

4) փրկարարական ուժերի՝ վնասված օջախներին մոտեցման ապահովումը.

5) կառավարման կետերի նախապատրաստումը և համապատասխան գույքով հագեցումը.

6) փրկարարական աշխատանքների տեղամասերի լուսավորության ապահովումը գիշերային ժամանակ.

7) վնասված կամուրջների ուսումնասիրությունը և գետանցումների ապահովումը.

8) բնակչության տարահանման կետերի նախապատրաստումը.

9) տուժած բնակչության՝ ժամանակավոր կացարաններով, գիշերային լուսավորությամբ և այլ կենսաապահովման անհրաժեշտ միջոցներով ապահովումը.

10) բնակչության՝ խմելու ջրով ապահովումը.

11) երկրաշարժի հետևանքների վերացման ինժեներական ապահովման իրականացվում է Մարզի տարածքի շինարարական կազմակերպությունների (անկախ կազմակերպչական իրավական ձևից) ուժերով և միջոցներով:

15. Բժշկական ապահովումն իրականացնում են ՀՀ ԱՆ «Արմավիրի ԲԿ», «Էջմիածնի ԲԿ», «Մեծամորի ԲԿ» «Արմեդ ԲԿ», «Հիսուսի մանուկներ առողջության կենտրոն» և հայանքների ամբուլատոր կենտրոնները: Բժշկական ապահովման համար պատասխանատու է Արմավիրի մարզպետի աշխատակազմի ոլորտը համակարգող վարչությունը: Երկրաշարժից տուժածների հիմնական զանգվածը բժշկական օգնություն ստանալուց հետո կտարահանվի անվտանգ տարածքներ: Տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովումը սանիտարական տրանսպորտով իրականացվում է ծառայության կողմից, այլ տրանսպորտային միջոցներով՝ տրանսպորտի և կապի ծառայությունների կողմից: Փրկարարական կազմավորումների բժշկական ապահովումը կիրականացվի երկրաշարժից տուժածներին բժշկական օգնություն ցուցաբերող բրիգադների ուժերով:

16. Հասարակական անվտանգության ապահովումն ընդգրկում է կազմակերպչական և ռեժիմային միջոցառումների համալիր, որն ուղղված է ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների հաջող իրականացմանը: Հասարակական անվտանգության ապահովումը կազմակերպվում է քաղաքներում և այլ բնակավայրերում, բնակչության տարահանման գոտիներում հասարակական կարգի պահպանության, փրկարար ուժերի մուտքի և տարահանման երթուղիներում ճանապարհային երթևեկության անվտանգության միջոցառումների իրականացման նպատակով, ինչպես նաև՝ աղետի ժամանակ բնակչության կորուստների հաշվառման համար: Հասարակական կարգի ապահովումն իրականացնում է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Արմավիրի, Վաղարշապատի և Բաղրամյանի բաժինների՝ համապատասխան պլաններով, որն անմիջապես դրվում է գործողության մեջ: Ուժեղ երկրաշարժի դեպքում, միջոցառումների իրականացման շահերից ելնելով, զինվորական հրամանատարության մարմինների հետ կազմակերպվում է սերտ համագործակցություն՝ հասարակական կարգի պահպանության, պարետային ծառայության, ինչպես նաև փրկարարական աշխատանքների կազմակերպման հարցերով:

17. Նյութատեխնիկական և սննդամթերքի ապահովումը ներառում է աղետի գոտու տուժած բնակչության և փրկարարական ուժերի կենսաապահովման համար սննդի և առաջին անհրաժեշտության միջոցների ժամանակին տեղափոխումը և բաշխումը:

Նյութատեխնիկական և սննդամթերքի ապահովման իրականացման պատասխանատուն է Արմավիրի մարզպետի աշխատակազմի ոլորտը համակարգող վարչությունը:

Ուժեղ երկրաշարժից հետո սննդի և առաջին անհրաժեշտության միջոցների ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պահուստային ֆոնդից:

18. Տրանսպորտային ապահովումն իրականացնում է Արմավիրի մարզպետի աշխատակազմի ոլորտը համակարգող վարչության կողմից ներկայացված հայտերի համաձայն: Տրանսպորտային ապահովման համար անհրաժեշտ են հետևյալ տրանսպորտային միջոցները՝

1) մարդատար ավտոմեքենաներ (ավտոբուսներ, միկրոավտոբուսներ), որոնք նախատեսված են փրկարարական կազմավորումներ տեղափոխելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում աղետի գոտի փոքրածավալ նյութատեխնիկական միջոցներ տեղափոխելու, իսկ աղետի գոտուց տուժած բնակչությանը տարահանելու համար:

2) բեռնատար ավտոմեքենաներ, որոնք նախատեսված են նյութատեխնիկական, ինչպես նաև առաջին անհրաժեշտության միջոցներ (սննդամթերք, հագուստ և հանդերձանք, վրաններ, անկողնային պարագաներ, ջեռուցման սարքեր, դեղամիջոցներ, տնտեսական իրեր և այլն) աղետի գոտի տեղափոխելու համար:

3) բեռնատար (նավթատար) և ջրատար ավտոմեքենաներ, որոնք նախատեսված են վառելիք և ջուր աղետի գոտի տեղափոխելու, ինչպես նաև գործող տրանսպորտային միջոցների լցավորումն ապահովելու համար:

4) ինժեներական (շինարարական) և հատուկ տեխնիկա, որը նախատեսված է աղետի գոտում համապատասխան աշխատանքներ իրականացնելու համար:

5) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ինչպես նաև այլ մարմինների կողմից հատկացվող տրանսպորտային միջոցները վառելիքաքսուքային նյութերով ապահովվում են՝ մինչև հավաքակայան դրանք ներկայացնող մարմինների հաշվին, այնուհետև՝ կենտրոնացված կարգով երթուղու վրա և փրկարարական աշխատանքների տեղամասերում ծավալված լցավորման կայաններում:

Երկրաշարժի առաջացման մասին ահազանգ ստանալուց հետո Արմավիրի մարզպետի աշխատակազմի ոլորտը համակարգող վարչության կողմից 1-3,5 ժամվա ընթացքում կազմակերպում է համապատասխան թվով և տեսակի տրանսպորտային միջոցների պատրաստականությունը:

Մեքենաների վարորդների համար դուրս են գրվում ուղերթային թերթիկներ և աղետի գոտի մուտք գործելու համար անցագրեր, իսկ շարասյուների ավագներին տրվում են վարձված միջոցներին վերաբերող համապատասխան փաստաթղթեր: Կազմակերպվում են շարժական լցավորման կետերի աշխատանքները, ստեղծվում են շարժական ավտովերանորոգման կետեր, որոնք հագեցվում են համապատասխան պահեստամասերով և սարքերով: Նշված շարժական ավտովերանորոգման կետերը կտեղաբաշխվեն լցավորման կետերի մոտակայքում՝ տեղեկություններ ստանալով լցավորվող կամ ընթացող մեքենաների վարորդներից, և անհրաժեշտության դեպքում կմեկնեն դեպքի վայր:

19. Երկրաշարժի գոտու և Մարզի սեյսմիկ իրավիճակի հսկողությունը և իրավիճակի մասին տեղեկությունն ապահովում է լիազոր մարմնի «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ը:

Այդ նպատակով «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ը հսկողության տակ է վերցնում երկրաշարժի գոտու և Մարզի տարածքի ընթացիկ սեյսմիկ իրավիճակը, ավերածությունների բնույթն ու մասշտաբները, բնակչության հոգեբանական վիճակը և պարբերաբար (օրական մեկ անգամ) տեղեկություններ է ներկայացնում երկրաշարժի հետևանքների վերացման Մարզային հանձնաժողովին և ՄՓՎ-ին:

20. Տեղեկատվական ապահովումը ներառում է՝

1) երկրաշարժի մասին առաջին հաղորդագրությունը զանգվածային լրատվամիջոցներին (այսուհետ՝ ՀԼՄ) տրամադրում է «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ը: Մարզում տեղեկատվության ապահովման համար պատասխանատու է Արմավիրի մարզպետի աշխատակազմի ոլորտը համակարգող վարչությունը:

2) երկրաշարժի վերաբերյալ որևէ հրատապ հաղորդագրության դեպքում կազմվում է բնակչության վարքականոնների մասին հաղորդագրություն, որը փոխանցվում է «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, «Վիվա Արմենիա» ՓԲԸ և «Յուբոմ» ՓԲԸ բջջային կապի Մարզային օպերատորներին՝ բաժանորդներին SMS հաղորդագրություններ ուղարկելու համար:

3) անհրաժեշտության դեպքում Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ և Հայաստանի հանրային ռադիոյով «Հատուկ թողարկում» խորագրի ներքո պարբերաբար հեռարձակվում է տեղեկատվություն՝ բնակչության վարքականոնների, իրավիճակի, հետագա հնարավոր զարգացումների և իրականացվելիք միջոցառումների մասին:

21. Բնակչության կենսաապահովման, տուժածներին օգնություն ցուցաբերելու, փրկարարական աշխատանքների կազմակերպման համար և այդ նպատակով պարենային, բժշկական ու նյութական պաշարների նպատակային օգտագործման կարգն է՝

1) երկրաշարժի ժամանակ լուծվում են բնակչության կենսաապահովման հիմնական խնդիրները՝ բնակչության կյանքին, առողջությանը, աշխատունակությանը և ֆիզիոլոգիական պահանջների ապահովմանն ու պահպանմանը վերաբերող: Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նյութատեխնիկական ապահովումը և ֆինանսավորումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Այդ նպատակներին ծառայում են նաև առկա և ստեղծվող (ստացվող) նյութական պաշարներն ու Մարզային, համայնքների, կազմակերպությունների ու մարդասիրական օգնության միջոցները:

2) Ա՛ի համար անհրաժեշտ նյութական պաշարների ու միջոցների ցանկը և ծավալները որոշում են ըստ չափաքանակների՝ տուժած բնակչության թվի հիման վրա և Ա՛ի դասակարգմանը համապատասխան:

3) տուժած բնակչության սոցիալական և կենսաապահովման, այդ թվում՝ անօթևան մնացած բնակչության՝ ժամանակավոր կացարաններով ապահովման կազմակերպիչն ու պատասխանատուն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է, Մարզում ժամանակավոր կացարաններով ապահովման պատասխանատուն է Արմավիրի մարզպետի աշխատակազմի ոլորտը համակարգող վարչությունը:

4) Ուժեղ երկրաշարժի դեպքում Մարզի տուժած բնակչությանը կացարաններով ապահովումը իրականացվում է՝

ա) աղետի գոտու տուժած համայնքների չվնասված շինություններում և առանձնատներում:

բ) աղետի գոտուց դուրս գտնվող համայնքների բնակելի շենքերում, առանձնատներում և հասարակական նշանակության կառույցներում, հյուրանոցներում ու հանրակացարաններում:

գ) աղետի գոտուց դուրս, անվտանգ տարածքներում հիմնվող վրանային ճամբարներում:

## **VI. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՍՏԱՑՄԱՆ ՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

22. Միջազգային փրկարար ուժերի և օգնության ընդունման, ստացման ու բաշխման միջոցառումները բաղկացած են՝

1) մարդասիրական օգնության ընդունումից:

2) մարդասիրական օգնության բաշխումից:

23. Մարդասիրական օգնությունը տրվում է Ա՛ի հանձնաժողովի միջոցով՝ տուժած տարածքների համայնքների կողմից ներկայացված հայտերի հիման վրա, որոնք կազմվում

են նախօրոք մշակված նորմերի հիման վրա՝ հաշվի առնելով կոնկրետ աղետի դեպքում տուժած բնակչության հետ կապված առանձնահատկությունները:

24. Մարդասիրական օգնության ընդունման և բաշխման գործողություններն իրականացվում են համապատասխան հայտերի հիման վրա:

25. Միջազգային մարդասիրական օգնության ստացման օպերատիվությունն ապահովելու նպատակով այն նախօրոք պլանավորվում է՝

1) տուժածների համար սննդի, առաջին անհրաժեշտության առարկաների, վառելիքի նորմեր՝ 10 օրվա համար.

2) դեղորայքի և բժշկական սարքերի համար.

3) ժամանակավոր կացարանների անհրաժեշտ թվի համար:

26. Մարդասիրական օգնության ստացման և բաշխման կարգն է՝

1) միջազգային մարդասիրական օգնության բաշխման պատասխանատվությունը կրում է Մարզի ԱԻ հանձնաժողովը: Հանձնաժողովը ստեղծվում է ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի բազայի վրա, որի կազմում ընդգրկվում են ներկայացուցիչներ ՄՓՎ-ից, ՀՀ ՆԳՆ ՔՈԳՎ Արմավիրի մարզային վարչությունից, Շիրակի զինվորական կայազորից և ՀՀ ԱԱԾ Արմավիրի մարզային վարչությունից:

2) ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմում և աղետի գոտու համայնքներում ստեղծվում են ստացված մարդասիրական օգնության ընդունման և բաշխման խմբեր,

3) աղետի գոտում մարդասիրական օգնությունը կենտրոնացված ձևով հանձնվում է Մարզային և (կամ) համայնքային ԱԻ հանձնաժողովներին կից ստեղծված մարդասիրական օգնության բաշխման խմբերին: Այդ բաշխման խմբերը, համապատասխան ցուցակների հիման վրա, մարդասիրական օգնությունը բաշխում են բնակչությանը:

27. Միջազգային փրկարարական ուժերի ժամանման, փրկարարական աշխատանքների և փոխհամագործակցության կազմակերպման կարգը հետևյալն է՝

1) փրկարարական աշխատանքների իրականացման գործընթացում փոխգործողությունները կազմակերպվում են ԱԻ արագ արձագանքման, ուժերի նպատակաուղղված օգտագործման և այդ ուժերի միջև գործողությունների հստակեցման նպատակով: Փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են ըստ վայրի և ժամանակի.

2) միջազգային ուժերի ներգրավումն իրականացվում է համաձայն Մարզի ԱԻ հանձնաժողովի կողմից ներկայացված հայտի:

3) միջազգային ուժերի անմիջական ղեկավարումն աշխատանքային տեղամասերում իրականացնում է աշխատանքային տեղամասի ղեկավարը:

28. ՄՓՎ, Շիրակի զինվորական կայազորի, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ Արմավիրի մարզային վարչության, ՀՀ ԱԱԾ Արմավիրի մարզային վարչության հետ փոխգործողությունների կազմակերպման կարգը հետևյալն է՝

1) փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են նախապես մշակված ու հաստատված փոխգործողությունների պլանների հիման վրա.

2) փոխգործողությունների պլանների համաձայն՝ ԱԻ դեպքում՝ նշված պետական կառավարման մարմինների ղեկավարների ազդարարումն իրականացնում է ՀՀ ՆԳՆ 112 ՕԿԿ-ը, փոխգործողությունների պլաններով նախատեսված ուժերի ազդարարումը, նրանց փրկարարական աշխատանքներին մասնակցությունը և նյութատեխնիկական ապահովումն իրականացնում են տվյալ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարները:

29. Հասարակական փրկարարական ջոկատների հետ փոխգործողությունների կազմակերպման կարգը հետևյալն է՝

1) փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են ՄՓՎ և հասարակական ջոկատների միջև նախապես մշակված ու հաստատված պլանների հիման վրա.


2) փոխգործողությունների պլանների համաձայն հասարակական ջոկատների ազդարարումը և նրանց ղեկավարումը փրկարարական աշխատանքների իրականացման գործընթացում կազմակերպում է ՄՓՎ-ն, իսկ այդ ուժերի անձնակազմի ազդարարումը, հավաքը, մուտքն աղետի գոտի և նրանց նյութական ապահովումն իրականացնում են իրենք՝ ջոկատները:

## VII. ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՃՇԳՐՏՈՒՄԸ

30. Պլանի ճշգրտման գործընթացը համակարգում է Արմավիրի ՄՓՄ-ն:

31. Վթարափրկարարական աշխատանքների պլանավորման կատարելագործումը պետք է նպատակաուղղված ձևով իրականացվի գնահատման մեթոդների, միջոցների և անհրաժեշտ բավարար պայմանների ճշգրտման ու անվտանգության բարձրացման կարգավորման, վերլուծական, իրավական, տնտեսական և կազմակերպչական հիմքերի մշակման հաշվին:

07.05.2026



ԱՐԱՄ ՆՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

«Արմավիրի մարզպետի աշխատակազմի  
գլխավոր քարտուղար Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ»

**ՊԼԱՆ**

**ԽՈՇՈՐ ՀՐԴԵՀԱՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՏ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԵԼՈՒ**

**1. Իրավիճակի գնահատում՝**

1) Հայաստանի հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Արմավիրի մարզում (այսուհետ՝ Մարզ) գործում են թվով 40 գազալցակայաններ, թվով 15 բենզալցակայաններ և թվով 23 մեկտեղված բենզալցակայաններ ու գազալցակայաններ, որոնք ունեն յուրաքանչյուրը 2-14 աշխատող:

2) Լցակայանները տեղակայված են բնակելի տարածքներից պատշաճ հեռավորության վրա, աշխատանքային ժամերին լցակայաններում մարդկանց (վարորդներ, ուղևորներ, լցակայանի աշխատակիցներ) առավելագույն թիվը կազմում է 30 մարդ:

**2. Եզրակացություններ՝**

1) Լցակայաններում հրդեհի կամ պայթյունի դեպքում հնարավոր է.

ա) շենքի կամ առանձին մասերի փլուզում,

բ) այրվող օբեկտներին և հրդեհաշիջման նպատակով օգտագործող ջրաղբյուրներին մոտենալու ճանապարհների խցանում,

գ) ներքին և արտաքին ջրացանցերի հրդեհաշիջման ստացիոնար համակարգերի, տեխնոլոգիական սարքավորումների վնասում կամ ոչնչացում,

դ) հրդեհապայթյունավտանգ օբեկտի վայրում աշխատողների, ինչպես նաև վարորդների և ուղևորների կողմից վնասվածքներ ստանալը բեկորներից, կառուցատարերի կտորներից, պայթյունի ալիքից, ինչպես նաև այրման և պայթյունի թունավոր արգասիքներից,

ե) ամբարների պատերի պատռվածք, նավթամթերքների եռում և արտանետում.

2) կրակի արագ տարածում տեխնոլոգիական բաքերով, կոյուղով և այլ համակարգերով,

3) այրման արգասիքների և ջերմային հոսքերի ուղղությունների փոփոխություն՝ օդերևութաբանական պայմաններից կախված.

**3. Ազդարարում՝**

1) հրդեհապայթյունավտանգ իրավիճակի առաջացման վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) 112 օպերատիվ կառավարման կենտրոնը (այսուհետ՝ ՕԿԿ) ստանում է օբյեկտների կամ համայնքների ղեկավարներից, ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) Արմավիրի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) հրշեջ փրկարարական ջոկատներից (այսուհետ՝ ՀՓՋ) կամ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Մարզային ստորաբաժանումներից և ազդարարում ՄՓՎ պետին, որն էլ՝ ՀՀ Արմավիրի մարզպետին.

2) ՕԿԿ-ից իրականացվում է համապատասխան ՀՓՋ-ի և այլ իրավասու ծառայությունների ազդարարումը:

**4. Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացում՝**

1) հրդեհապայթյունավտանգ օբեկտներում վթար առաջանալու դեպքում իրականացվում են բնակչության պաշտպանության հետևյալ միջոցառումները՝

